

Ա Ն Պ Ր Է Ա Ս Ե Ր Է Ց *)

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻՊԱԿ

(1617)

Է.

Ո՞վ էր Չահուլս-բէկը և ի՞նչ ունէր Տէր-Անդրէասի անարատ ընտանիքի հետ:

Այս հարցին պատասխանելու համար մեկը մի քանի տարով դէպի անցեալը պիտի դառնանք:

Երբ երկտասարդ Անդրէասը Սիւնեաց Անապատում իւր դպրութիւնն աւարտելով՝ ուսուցիչ կարգուեցաւ Ագուլեաց դպրոցում, այդ ժամանակ Չահուլս-բէկը, որ ընիկ Ագուլեցի էր, վերականգնու էր նշանակուած հայրենի գիւղաքաղաքի վրայ: Իբրև զտարիւն պարսիկ, նա ոչ միայն շահամոլ այլ և վավաշոտ մարդ էր. այդ պատճառով և կեղեքում էր տեղացի հայերին ոչ միայն նիւթապէս, այլ և բարոյապէս: Վերջին տեսակի ամբարշտութիւնը նա երբեմն հասցնում էր մինչև այն տեղ, որ յափշտակում էր հայոց ընտանիքներից գեղեցկուհիներ, պատճառ բերելով թէ՛ հրաման ունի Սպահանից կանայք հայթայթելու Չահի հարեմի համար: Այդ յափշտակութիւնները թէպէտ միշտ չէին յաջողում, որովհետև զօրաւոր պաշտպան ունեցողները դիմադրում էին նրան, բայց և այնպէս շատ

*) Տես Լուսայ Բ. ա. գիրք Ա.

անպաշտպաններ էլ զոհ էին դառնում հրէշ վերակացուի կրքերին:

Ահա այսպիսի մի դէպքի առթիւ էր որ Անդրէասը ընդհարումն ունեցաւ Չահուլիսի հետ մի քանի տարի առաջ:

Հազիւ մի երկու ամիս էր ինչ երիտասարդ սարկաւազը Ագուլիս գալով ստանձնել էր ուսուցչական պաշտօնը: Մի օր նա դիպուածով տեսաւ Խցաձորի եկեղեցու հանդէպ ապրող մի այրիի աղջկան, որ պաշտիգում նըստած ասղնագործում էր: Դա մի նորատի և չքնաղ գեղեցկուհի էր, որ առաջին վայրկեանից իսկ երիտասարդի ուշադրութիւնը գրաւեց: Նուրբ շղարշի տակից գողունի նայող նրա աչքերը, որոնք փայլում էին հեռուից ինչպէս զոյգ աստղեր, տղայի սիրտը, կարծես, շղթայեցին ցանկապատի վրայ: Երիտասարդը որքան էլ պարկեշտ ու սրբասուն, այսուամենայնիւ անկարող եղաւ իրեն ուղղուած հրեշտակային հայեացքը ձգել ու անցնել: 2⁵ որ բնութիւնը ունի գաղտնի սլփեր, որոնք յաղթահարում են յաճախ մարդկային օրինաց խստութիւնները: Սարկաւազը կանգ առաւ այդտեղ մի քանի վայրկեան և սկսաւ դիտել այդ հազիւ տասն և հինգ գարուն անցուցած գեղեցկուհուն: Եւ ահա այդ վայրկեաններն էլ բաւական եղան որ սիրոյ թագուն հուրը բոցավառուէր նրա սրտում: Երբ երիտասարդը հեռացաւ ցանկապատից, Աստղկան աղեղն արդէն նետահարել էր նրան:

Այնուհետև սարկաւազը յաճախ անցնում էր պարտիզի մօտով որպէս զի հեռուից գոնէ տեսնէ գեղանի դրացուհուն, որ իւր հոգեկան աշխարհի մէջ այնպիսի մի անծանօթ, բայց կարի հաճոյական յեղաշրջումն էր առաջ բերել: Մանկամարդ աղջիկը նոյնպէս անտարբեր չէր. նա աւելի վաղ էր գրաւուել գեղեցիկ երիտասարդով: Բայց այդ հանգամանքը անյայտ էր Անդրէասին, ինչպէս և այ-

րի մօրը, որ անքուն աչքերով հսկում էր իւր աղջկայ վրայ և հաւատացած էր թէ՛ նրա սիրտը երբէք չի գրաւուիլ առանց իւր հրամանին....

Մի օր, երբ սարկաւազը, ըստ սովորականին, անցնում էր դրացու տան մօտով, տեսաւ որ նրա բակում կանգնած են զրահաւորուած ֆարրաշներ: Իսկոյն մի կասկած պաշարեց նրա սիրտը և նա շտապաւ տան բակը մտաւ՝ իմանալու համար թէ՛ ի՞նչ ունին դրանք այդտեղ:

Հազիւ երիտասարդը հասաւ զինուորներին և ահա տան միջից լսեց կանացի ճիչ ու աղաղակ: Առանց այլ ևս ֆարրաշների վրայ ուշ դարձնելու, նա վազելով ներս ընկաւ տուն:

Որքան մեծ եղաւ երիտասարդի դարմանքն ու սարսափը, երբ նա տեսաւ այդտեղ ճահճուկս բէկին, որ երկու ֆարրաշների հետ միասին այրիի տունը մտած՝ կամենում էր նրա գեղանի դուստրը յափշտակել:

Սենեակի մի անկիւնում օրիորդը կծկուած՝ դողւում էր երկկզից: Նրա վարդ գոյնը թռել և շրթունքները դալկացել էին: Գեղանի աչքերը, որոնք իւր սրտի խաղաղ ժամանակ կրակ էին ցայտում, այժմ մթաղներ, սառել էին: Նրա հայեացքն արտայայտում էր անհուն սարսափ: Իսկ խեղճ մայրը ձեռքերն աջ ու ձախ պարզելով, շարունակ ճշալով և օգնութիւն գոչելով՝ պաշտպանում էր աղջկան՝ ինչպէս մի անզօր բազէ, որ թևատարած ու սպառնալից աչքերով պատսպարում է իւր ձագը դաժան արծուի մագիլներից....

— Ի՞նչ է պատահել այստեղ, գոչեց սարկաւազը, որ իւր առաջ բացուած տեսարանից ամեն ինչ գուշակել էր:

— Ամա՛ն վարժապետ, աղջիկս ազատիր... Վարդիթերս փրկիր, աղիողորմ ձայնով գոչեց այրին ձեռքերը դէպի սարկաւազը տարածելով:

— Ի՞նչ են կամենում սրանք ձեզանից, հարցրեց ե-

բրտասարդը, սպառնալից աչքերը չորս կողմը յաժելով:

— Վարդիթերս... Վարդիթերս կամենում են խել մրմնջաց այրին:

— Ոչ որ չի համարձակուիլ. գոչեց երիտասարդը այնպիսի մի ձայնով, որ արտայայտում էր թէ զայրոյթ և թէ կատաղութիւն. ապա դառնալով Ջահուլի բէկին, որ նայում էր իրեն վայրենի հայեացքով, հարցրեց. — Ընչ ես կամենում այս կնոջից, բէկ:

— Քեզ ընչ. ո՞վ ես դու. ընչպէս ես համարձակում մտնել այստեղ և խառնուել տէրունական գործերին, գոռաց բէկը զայրազին:

— Տէրութեան անունը մի յիշիր. դրանով չես վախեցնիլ ընձ. այլ ասա ուղղակի՝ ընչ պահանջ ունիս այս կնոջից:

— Դուրս հանեցէք այդ թշուառականին, գոռաց բէկը դէպի ֆարրաշները:

Նրանք մօտեցան սարկաւազին:

Վերջինս, որ մտել էր այնտեղ բոլորովին անդէն, նայեց իւր շուրջը՝ տեսնելու համար թէ՛ ընչ կարող է ձեռք ձգել իրեն պաշտպանելու համար: Սենեակում ոչինչ չկար: Միայն նրա մի անկիւնում կանգնած էր փորրիկ ոստայն, որի վրայ գտնւում էր կիսագործ գորգ: Երիտասարդը վազեց դէպի ոստայնը և անսպասելի մի ուժով, որը, կարծես, այդ բոպէին ստացաւ, խլեց ոստայնի սեպերով ամրացած ձողը և նրանով զինուած՝ ահաւոր ձայնով որոտաց:

— Օ՛ն ուրեմն, մօտեցէք ձեր ոյժը փորձելու համար:

Փարրաշները սրերը մերկացնելով՝ դիմեցին դէպի երիտասարդը:

Սարկաւազը, որ Սիւնեաց անապատում հոգևոր զինուորութեան վարժուելով հանդերձ՝ չէր մոռացել, նաև, մարմնական զէնքով կռուելու արհեստը, այդ վայրկենին

այնպիսի մի գօրութիւն ստացաւ, որ նրան թուաց թէ՛ չի պիտի յաղթահարուի՝ եթէ ֆարրաշների հետ միասին դրսի զինուորներն էլ յարձակուին իւր դէմ։ Այն միտքը, թէ սիրած աղջկայ ազատութեանն են սպառնում պարսիկները, նրա սիրտը լցրեց քաջութեամբ և բազումները դարձրեց անպարտելի։

Նա մոլեգին կատաղութեամբ յարձակուեցաւ իւր դէմ խիզախող ֆարրաշների վրայ և շեշտակի մի հարուածով դուրս թուցրեց նրանցից մէկի ձեռքից սուրը և խոյացաւ երկրորդի վրայ։

Վերջինս սարկաւազի արիւնուռչտ աչքերը տեսնելով՝ մի քայլ յետ քաշուեցաւ և սպասում էր բէկի նորհրամանին։ Բայց սուսերազուրկ զինուորը դուրս թռաւ բակը՝ այդտեղ սպասող զինուորներին օգնութեան կանչելու։

Սակայն Չահուխը, որ չէր կամենում բռնաբարման ձև տալ իւր պազանային վարմունքին, թոյլ չտուաւ նորեկներին յարձակուել երիտասարդի վրայ։ միայն զայրացած ասաց.

—Այս աղջկայ համար վաղուց գրուած է Չահին և սա պիտի նրա հարեմը գնայ։ Ես մտել եմ այստեղ Չահի հրամանով և դու, որ խանգարում ես ինձ, գիտցիր որ դիմադրում ես Չահին իրեն։ Խելքդ գլուխդ ժողովիր և դուրս գնա, ապա թէ ոչ կը հրամայեմ որ հէնց այս րոպէին գլուխդ թուցնեն։

—Իմ գլուխը չի թուչիլ մինչև որ բոնը իմ ոտքերի տակ չլինի, գոռաց երիտասարդը համարձակօրէն։ Չահաբասը արդար թաղաւոր է։ Նա չի ընկերանալ յափըշտակիչներին ու առևանգողներին։ դադարիր նրա անուշով խօսելուց և դուրս գնա՝ այստեղից քանի կենդանի ես և քանի սեպհական ոտքերով կարող ես բախլ։

Սարկաւազի անժոյժ սպառնալիքը ծանր հա-

րուած պիտի բերէր իւր գլխին, եթէ այդ վայրկենին, ներս չխուժէին Խցաձորի բնակիչները:

Վարդիթերի մայրը, որ մի վայրկեան սարկաւազի պաշտպանութեան յանձնելով դուստրը՝ խոյս էր տուել սենեակից և դուրս գալով փողոց՝ սկսել էր աղաղակել և օգնութիւն կանչել, բոլոր թաղը, համարեա, ոտի հանեց մի ընդհանուր մօտ վազեցին թաղի երիտասարդները, առաջաւոր մարդիկ, հասակաւոր կանայք և, մինչև անգամ, Խցաձորի քահանաները: Տուն մտնելով՝ նրանք յուզուած ու վրդովուած շրջապատեցին առևանգողներին:

— Ինչո՞ւ էք հաւաքուել: Ի՞նչ էք կամենում: հարցրեց բէկը զայլազին և հրամայեց զինուորներին դուրս հանել ամբոխը:

Բայց սարկաւազը, որ վերջինի ներս խուժելուց աւելի էր սիրտ առել, նորէն սկսաւ խօսել:

— Այս մարդիկը, բէկ, ներս են մտել իրենց հաւատակցի և բարեկամի տունը և այս առաջին անգամը չէ. նրանք սովոր են այստեղ յաճախել: Բայց դու ինչ ունիս այս տան մէջ... այն աստ մեզ:

— Ես բեղ արդէն ասացի, թշուառական, ընդհատեց Չահուուխը:

— Ասացիր, այո՛ւ. բայց կամենում եմ որ նոյնը կրդկեսես նաև այս ժողովրդի առաջ. կամենում եմ որ նրանք էլ լսեն քո բերանից թէ՛ Չահուուխ բէկը, Ամիրգիւնէ խանից Ագուլիսի վրայ կարգուած Վէրիլը, որ պէտք է հովանաւոր ու պաշտպան հանդիսանայ իւր խնամքին յանձնուած ժողովրդին, յարձակուել է այս տան վրայ իբրև աւազակ, նրա միակ հարստութիւնը յափշտակելու համար,...

— Գարշելի անհաւատ... դու համարձակուում ես աւազակ անուանել ինձ... գողաց Չահուուխ բէկը և սուրը հանելով՝ խոյացաւ դէպի սարկաւազը: Բայց մի քանի

հօկու բազումներ բռնեցին նրան իսկոյն և ամբոխի զայրացած գոչիւնը ամբողջ տունը թնդացրեց:

— Դուրս, դուրս հանեցէք այդ աւազակներին, այդ անհաւատ շներին... մի վախենաք, տղերք, խիեցէք, ջարդեցէք... գոռում, գոչում էին ամբոխի մարդիկը և բռունցքներն ու դագանակները շարժում օդի մէջ:

Ջահուլս-բէկը, որ բարկութիւնից, գրեթէ կատաղել էր, հրաման արաւ իւր մարդկանց՝ գնալ, սարկաղների կանչել՝ յանդուգն հայերին կոտորելու համար:

Բայց ծերունի Տէր-Յովսէփը, որ ներս մտնող քահանաներից մինն էր, մօտեցաւ—բէկին և խաղաղ ու ամօքիչ խօսքերով խնդրեց նրան հեռանալ, որպէս զի ամբոխն աւելի ևս չըզրգուլի:

— Ժողովուրդը, բէկ, նման է ծովի, որի խաղաղ ժամանակ կարող ես վրան նաւարկել, որքան կամենաս. բայց երբ նա յուզուեց ու խռովուեցաւ, ամենից զօրեղ նաւերն էլ կարող է խորտակել... զգոյշ նաւապետը չը պէտք է իւր նաւը ալիքներին մատնէ. այդ օգուտ չի բերի իրեն, ասաց Տէր-Յովսէփը և Ջահուլսի ձեռքից բռնելով առաջնորդեց նրան դէպի տան դուռը:

Բէկը, որ արդէն չափել էր հակառակորդների ոյժը, աւելի չդիմադրեց. Իբրեւ խորամանկ պարսիկ, նա օգուտ քաղեց քահանայի միջամտութիւնից՝ պատուով նահանջ տալու համար:

— Քեչիչ, ես պատիւ եմ անում քո սպիտակ մօքուրին և հեռանում եմ. բայց իմացիր որ Ջահի հրամանը անկատար չի մնալ. Սյդ աղջիկը ես սարկազներով դուրս կհանեմ այս տանից և տասն օր չանցած նա Սպահանում կլինի... սպառնաց Ջահուլս-բէկը և իւր մարդիկներով դուրս գնաց այրիի տանից:

— Կտեսնենք, կտեսնենք, գողացին բէկի ետևից անժոյժ երիտասարդները և սարկաւազին իրենց գլուխ ու-

Նենալով՝ սկսան սիրտ տալ ու խրախուսել յուսահատ այրիին և ահաբեկ աղջկանը:

— «Մենք պէտք է մեռած լինինք որ այդ շները կարողանան Վարդիթերի մի մազը պոկել», ասում էին նրանք:

Եւ այդ խօսքերը անկեղծ էին: Բայց եթէ Չահուկսբէկը գործին այն կերպարանքը տար որ իրր թէ՛ ինքը կամենում է եղել այդ աղջկան վերջնել Չահի համար և իրեն խանգարել են, և եթէ նա՝ դէպքից օգտուելով՝ մի քանի բարուրանքներ էլ բարդէր Ագուկցիների, կամ նոյն իսկ սարկաւազի վրայ, թէ իբր դրանք իրենց վարմունքով կամեցել են ոչ թէ աղջկան ազատել՝ այլ միայն Չահին անպատուել, հարկաւ, գործը ծանր կերպարանք կառնէր և աղետալի հետևանքներ կունենար:

Անդրէաս սարկաւազը, որ հեռատես ու շրջահայեաց էր, այրիի դստեր ազատութիւնը ձեռք բերելուց յետ մտածեց, նա և, այդ դէպքից առաջ գալիք հետևանքների վրայ և շտապեց վտանգի առաջն առնել:

Նա մի խումբ երիտասարդների յանձնեց՝ հսկել այրիի տան ու նրա դստեր պահպանութեանը գիշեր և ցերեկ, վախենալով թէ՛ մի գուցէ Չահուկսբէկը յանկարծ յարձակուելով՝ դարձեալ յափշտակէ օրիորդին, իսկ ինքը առնելով իւր հետ ծերունի Տէր-Յովսէփին, դիմեց Երևան՝ Ամիրգիւնէ նախարարի օգնութիւնը հայցելու:

Ամիրգիւնէն, որ լուրջ ու արդարասէր մարդ էր և բարեկամ լինելով Մելքիսեդեկ կաթողիկոսին՝ սիրում էր նաև նրա հոգևորականներին, հաճութեամբ լսեց սարկաւազի և նրան ընկերացող բահանայի բողոքը. զայրոյթ արտայայտեց Չահուկսբէկի անիրաւ վարմունքի դէմ և օրիորդին ապագայ հետապնդութիւններից ազատելու համար՝ հետևեալն ասաց.

— Այս երկրում, անիրաւ բռնաբարութիւնից ազատ չէ ոչ ոք: Նոյն իսկ ես, Ամիրգիւնէ-Խանս, որ անկախ

կառավարիչ եմ ամբողջ էրմենիստանի ու Գուրջիստանի, դարձեալ ստիպուած եմ դաւաճան մարդկանց զայրոյթը չգրգռել, որովհետեւ նրանցից ամեն մինը հեշտութեամբ կարող է մուտ գործել Չահի արքունիքը, եթէ ինձ մատնելու և դրանով Չահին որևէ օգուտ ընձեռելու առիթ ունենայ ձեռին...: Այդ պատճառով իսկ խորհուրդ եմ տալիս ձեզ՝ վերադառնալ Ագուլիս և անմիջապէս ամուսնացնել այդ աղջկան մի որ և է երիտասարդի հետ: Մեր մէջ ընդունուած օրէնքով անկարելի է յափշտակել մի կին, որ օրինաւոր ամուսին ունի: Հետևապէս, ամուսնացնելով այդ աղջկան, դուք կապահովէք նրան նոյն իսկ ապագայ հետապնդութեանց դէմ: Իսկ ինչ վերաբերում է Չահուլի-բէկին, ես նրան արժանաւոր հատուցումն կանեմ: Այս քանիերորդ անգամն է որ նա դմանօրինակ անիրաւութեամբ բռնանում է խեղճ ժողովրդի վրայ: Պէտք է վերջապէս հասկացնել նրան թէ՛ հօտի պահապան շունը իրաւունք չունի պատառելու իւր պահպանութեան յանձնուած ոչխարները...:

Տէր-Յովսէփն ու սարկաւազը սրտազին շնորհակալութիւն արին արդարասէր Ամիրգինէին և ուրախութեամբ վերադառնալով Ագուլիս, կատարեցին խանի պատուէրը ճշդութեամբ, որովհետեւ փեսացուն արդէն պատրաստ էր:

Երկու օրից յետ, Խցաձորի սուրբ Յովհաննէս եկեղեցում, կատարուեցաւ օրիորդ Վարդիթերի և սարկաւազ Անդրէասի պսակը: Իսկ դրանից մի օր յետոյ՝ հրաման հասաւ Ամիրգինէ խանից, որով Չահուլի բէկը պաշտօնանկ էր լինում և նրա տեղ կարգւում էր վերակացու խանի մի ուրիշ հաւատարիմը:

Այսպիսով Անդրէաս սարկաւազի յալթութիւնը կրկնակի էր դառնում. մին՝ որ ազատելով սիրած աղջկան՝ ամուսնանում էր հետը և միւս՝ որ Ագուլիսից հեռացնում էր բռնաւոր կառավարչին:

Սակայն վերջինս, իբրև քինախնդիր պարսիկ, չմոռացաւ իրեն հասած անարգանքը: Նա թողեց իսկոյն Ագուլիսը և հեռացաւ դէպի Սպահան: Ամիրգինէի հովանաւորեալին պատժելու և այդպիսով իրենից խլուած թէ պաշտօնի և թէ գեղեցկունու վրէժը լուծելու տենչը՝ ձեռներէցութեան կորով ներշնչեց նրան: Չահուլիսը մուտ գործեց Չահի արքունիքը իբրև հեռաւոր էրմինիստանի գործերին և նրա ժողովրդի ներքին կեանքին քաջածանօթ մարդ:

Եւ որովհետև Չահը սովորութիւն ունէր չրջապատել իրեն իւր ընդարձակ երկրի այս ու այն կողմերը քաջ ճանաչող մարդիկներով, որոնք հարկաւորուում էին նրան ամեն ժամանակ, ուստի Չահուլիսին էլ տեղ տուաւ արքունիքում: Բայց յետոյ տեսնելով նրա մէջ, նաև, իւր թագուն նպատակներին ծառայելու արտակարգ ընդունակութիւն, շնորհեց նրան սենեկապանի պաշտօն և չրջեցնում էր հետն ամեն տեղ:

Չահուլիս-բէկը հասել էր ուրեմն իւր նպատակին: Ամիրգինէի խլած պաշտօնի փոխարէն, նա այժմ ստացել էր սենեկապանութիւն: Այդքանն, ըստ երևութին, պիտի գոհացնէր նրան: Բայց իրօք այդպէս չեղաւ: Քինախնդիր պարսիկը չէր մոռանում գեղանի հայունուն, որին խել էր իրենից Ագուլեաց դպրոցի ուսուցիչը և այն՝ Ամիրգինէի օգնութեամբ: Պէտք էր ուրեմն դեռ աշխատել՝ այդ գրկանքի վրէժը ևս լուծել:

Եւ ահա այս պատճառով, երբ երկու տարուց յետ Չահաբասը եկաւ Հայաստան Օսմանցիների հետ կռուելու, Չահուլիսը որոշեց օգուտ քաղել հանգամանքից և իրագործել վաղուց ՚ի վեր փայփայած իւր միտքը, եթէ միայն թագաւորը յաջողութեամբ պսակէր իւր արշաւանքը:

Այդպէս էլ եղաւ: Օսմանցիք խոյս տուին Չահաբասի երեսից: Վերջինս այնուհետև պիտի վերադառնար Պարս-

կաստան: Բայց որովհետև, ինչպէս պատմութեանս առաջին գլխում ասացինք, նա իւր երկիրը դառնալուց առաջ կամենում էր, ըստ սովորութեան, մի երկու շաբաթ անցնել բարեկից Նախիջևանում, ուստի Ամիրգիւնէ խանը հարկ եղած կարգադրութիւններն արաւ, որպէս զի հայերը արժանաւոր ընդունելութիւն անեն Չահին:

Սակայն Չահուլի-բէկը փոխեց թագաւորի միտքը:

— Հայոց իսկական դանձերն ամբարուած են Ագուլիսում, ասաց նա Չահին. այդ զիւղարաղաքը, որ կարաւանի ճանապարհից հեռու գտնուելով ծածկուած է լեռնաձորում, ծառայում է հայերին իբր թագստեան անկիւն: Այդ տեղ են ապրում թէ՛ հարուստ խօջաները, որոց տները լիքն են ոսկով ու արծաթով և թէ՛ հայոց գեղեցիկները, որոնք էրմենիստանի փառքն են համարում: Եթէ Չահը հաճի իւր հանգստեան օրերը անցնել այդ քաղաքում, նա կը տեսնէ թէ՛ որքան բարիքներ կան այդ խորշում ծածկուած և թէ՛ հայերը, որոնք, իբր թէ միշտ արժանաւոր ընծաներով են դիմաւորում արեգակնափայլ Չահին, դեռ որքան շատ բան են թագցնում նրա հզօր աչքերից:

Այսբանը բաւական էր որ ազահ ու ցանկասէր Չահի հետաքրքրութիւնը գրգռուէր: Նա հրաման արաւ իսկոյն օթեան պատրաստել իւր համար Ագուլիսում: Եւ Ամիրգիւնէն, ինչպէս յիշեցինք, սուրհանդակներ ուղարկեց Սիսականի ամեն կողմերը՝ Չահի այդ նոր հրամանը հայոց երեսելիներին յայտնելու համար:

Այժմ դառնանք մեր պատմութեան:

Ը.

Օրը տարածամել էր երբ Տէր-Անդրէասը իւր այցելութիւններն աւարտելով վերադարձաւ տուն: Նա ամբողջ

օրը ոտքով շրջել էր Ագուլիսի ու Դաշտի բոլոր թաղերը և այցելել այն ընտանիքներին, որոց անունները մի օր առաջ նշանակել էր իւր ցուցակում: Յայտնելով ամենքին Չահի դիտաւորութիւնը, նա պատուիրել էր նրանց հեռացնել անմիջապէս գեղեցիկ երեխաներին, հարմանցու աղջկերանց և թաղցնել հարեան գիւղերում կամ այնպիսի տեղեր, ուր Չահի հետամուտների աչքը չկարողանար թափանցել:

Թէպէտ սաստիկ ցուրտն ու Ագուլեաց ձորի քամին իրենց աղղեցութիւնն արել էին երիտասարդ քահանայի վրայ՝ սառեցնելով նրա մարմինն և ոտքերը ընդարմացնելով, այսու ամենայնիւ, Տէր-հայրը տուն մտաւ ուրախ սրբտով և ժպիտը երեսին: Այն միտքը՝ թէ նա լաջողել է արդէն վտանգի առաջն առնել և այդպիսով հարիւրաւոր մանուկներ անխուսափելի կորստից ազատել՝ նրա հոգին լցրել էր անպատում ցնծութեամբ: Նա շտապեց այդ ուրախութեանը մասնակից անել, նաև, իւր ընտանիքին: Նստելով կրակարանի առաջ, ուր մանկամարդ տիրուհին մեծ կրակ էր բորբոքել, Տէր-հայրն սկսաւ պատմել այդ աւուր մէջ կատարած իւր գործերի մանրամասնութիւնը այն է՝ թուել այն ընտանիքները, որոց այցելել էր, կրկնել այն զրոյցները, որ ունեցել էր ծնողների հետ, կամ այն խորհուրդները, որ տուել էր նրանց: Նա նկարագրում էր թէ՛ ի՞նչ սարսափ էր պատել ագուլեցիներին՝ «մանկաժողովի» մասին տարածուած լուրը լսելուց յետ և թէ ինքը ի՞նչ ուրախութիւն էր պատճառում յուսահատ ծնողներին՝ վտանգի առաջն առնելու ճանապարհը սովորեցնելով նրանց:

Երիտասարդ քահանայի ծնողները, որոնք հասարակաց բաղով նոյնչափ էին հետաքրքրուած, որչափ և իրենց որդին, ուրախանում էին նրա լսելօր կարգադրութիւնները լսելով և առ այդ յայտնում էին իրենց գոհունակութիւնը: Իսկ Վարդիթեր տիրուհին, որ ժամանակի սովորութեան

համաձայն անխօս էր սկեսրայրից և, հետևապէս, չէր մասնակցում խօսակցութեան, շատանում էր միայն իւր սըրտում հրճուելով՝ որ ամուսնու արիութեան շնորհիւ սպառնացող վտանգը վերանում էր արդէն։ Սակայն զրոյցի վերջում, նա նշանացի հարցրեց երէցին թէ՛ ի՞նչ կարգադրութիւն է արել արդեօք դպրոցի աշակերտներին համար։

— Նրանց մասին էլ հարկ եղածը որոշել եմ արդէն, պատասխանեց երէցը. մեր վաթսու՛ն աշակերտների մի մասը տգեղներ են, որոնց Չահի մարդիկը, հարկաւ, չեն վերցնիլ. բայց գեղեցիկներին կուղարկենք Յղնայ, Խօջա-Անձրևի կինը յիսու՛ն հոգու տեղ է պատրաստել այնտեղ. մեր աշակերտները մենք կարող ենք վստահանալ նրան։

Հաղիւ երէցը իւր խօսքն աւարտեց եւ ահա եկեղեցու պարսպի դուռը բաղխեցին։

— Ո՞վ է այս ժամին այցելում մեզ, հարցրեց ինքն իրեն Տէր-հայրը և դուրս եկաւ պատշգամբ։

Ծերունի ժամկոչը շտապել էր արդէն դուռը բանալ։ Եկողը Սուրբ Թովմաս վանքի ծառաներից մինն էր, որ յայտնեց քահանային թէ՛ առաջնորդ հայր-սուրբը կանչում է իրեն։

— Ի՞նչ կայ, հարցրեց երէցը հետաքրքրութեամբ։

— Զգիտեմ... ասում էին թէ իբր Խանից հրաման է եկել, նրա մասին պիտի խօսեն... ուրիշ քահանաներ էլ կան մեզ մօտ. պատասխանեց ծառան։

Տէր հայրը ներս մտաւ իսկոյն և թէպէտ դեռ յոգնած, այսուամենայնիւ, հազաւ իւր նոր պարեգօտը, փոխեց հին գլխարկը և ձեռնափայտն առնելով դուրս եկաւ տանից։

Վանքի ծառան, որ ձեռքին կրում էր մոմաշորի երկար, խողովակաձև լապտեր, առաջ անցաւ Տէր-հօր ճանապարհը լուսաւորելու համար։

Որովհետեւ Խցածորից մինչև Ս. Թովմայի վանքը բա-

ւական երկար ճանապարհ էր և նրանք, գրեթէ, աւանի մի ծայրից մինչև միւսը պիտի անցնէին, ուստի Տէր-հայրը իւր ընթացքն արագացրեց, Նա կամենում էր վայրկեան առաջ հասնել առաջնորդի մօտ և իմանալ թէ՛ Նանի հրամանը ինչ նոր գոյժ է բերել իրենց. որովհետև քարի լուրի չէր սպասում բնաւ. Բայց ճանապարհը սահուկ էր և սառցապատ: Տէր-հայրը շարունակ սայթաքում էր. երկաթազամ քոշերը հազիւ էին նրա ոտքերը գետնի վրայ բռնում: Մինչև անգամ շուկայից անցնելու ժամանակ երէցը սահելով՝ նստեց ճանապարհի մէջ տեղում. իսկ գետաձորը իջնելու միջոցին՝ քիչ էր մնում գլորուէր լլճացած ջրերի մէջ, որոց վրայ այդ ժամանակ դեռ կամուրջ չէր հաստատուած: Տէր-հայրն այդ վայրկենին այն աստիճան էր զբաղուած օրուայ ծանր խնդրով, որ ուշադրութիւն չէր դարձնում ճանապարհի վատթարութեան վրայ: Եւ եթէ ծառայի զգուշութիւնը չլինէր, գուցէ մի վտանգ էլ պատահէր նրան, որ մտազբաղ լինելուց ի դատ նաև յոգնած էր օրուայ ծանր աշխատութիւնից:

Երբ նրանք հասան Ս. Թովմայի կամրջին, պատահեցին մի երկու ուրիշ քահանաների, որոնք նոյնպէս դրնում էին առաջնորդարան:

Տէր-Անդրէասը սիրով ողջունեց նրանց և երբ իմացաւ որ նրանք էլ կանչուած են հայր սուրբից, ինքն իրեն շնչաց.

— «Փառք Աստուծոյ որ գոնէ այս տազնապի օրերում կենդանութեան նշոյլ է ցոյց տալիս...»:

Այդ խօսքերը վերաբերում էին առաջնորդ վարդապետին, որ կաթողիկոսի մտերիմներից էր և, առ հասարակ, համակրութիւն չէր տածում դէպի Սիւնեաց Անապատի սաները: Ինչպէս որ ինքը կաթողիկոսը թշնամաբար էր վարում այդ անապատի ա-

ռաջնորդներն՝ օրինակ, Մովսէս Սիւնեցի, Պօղոս Մոկացի և այլ սրանց նման վարդապետների հետ, այնպէս էլ նրա մտերիմները հակակրում էին այս վերջինների աշակերտներին։ Եւ այդ հակառակութեան միակ պատճառը նախանձն էր։ Մելքիսեդեկեանները, որոնք, ընդհանրապէս, հոգևոր իշխանութեան պաշտօնակալներ էին, չարախնում էին՝ տեսնելով որ ժողովուրդը աւելի համակրում է Սիւնեաց Անապատի վարդապետներին և նրանց սաներին՝ քան իրենց, որ ամեն տեղ Սիւնեցիներին ընդունում են գրկաբաց և վարձատրում առատօրէն, մինչդեռ իրենք կանգուն էին մնում միայն վարած պաշտօնների շնորհիւ, իսկ այդ պաշտօններն սկսել էին արդէն կորցնել իրենց նշանակութիւնը այն օրից՝ որ կաթողիկոսը Ջահի կալանաւորն էր դարձել։

Բայց Սիւնեցիք ի հարկէ, յանցաւոր չէին այս դէպքում. ժողովուրդը ճանաչել էր նրանց արժանիքը, վայելել էր նրանց անձնուէր ծառայութեան բազմազան արդիւնքները. հասու էր եղիլ այն ճշմարտութեան՝ թէ Սիւնեաց անապատի առաքեալները ապրում են միայն գործելու համար և գործում են, իրօք, ՚ի շահ ժողովրդի։ Մինչդեռ կաթողիկոսի պաշտօնակալները ծառայում էին վարձատրութեան համար և գործում ՚ի շահ անձնական դիւրութեանց։

Ահա այս ներքին հաշիւներն էին պատճառ որ Անդրէաս երէցը, փառք տուաւ Աստծուն՝ տեսնելով որ առաջնորդը քահանաներ է հրաւիրում ընդհանուր խորհրդով գործ կատարելու համար և որ իրեն էլ, իբրեւ հակառակորդ անձի, պատուում է այդ հրաւերով։

Բայց սրբան մեծ եղաւ երիտասարդ քահանայի հիասթափութիւնն ու զարմանքը, երբ ներս մտնելով վանքի ընդունարանը՝ տեսաւ առաջնորդին իւր դէմ զայրացած։

Սա միջին հասակով, գերուկ մարմնով և լայնալանջ

մի վարդապետ էր։ Դէմքը թէպէտ դիւրեկան և գեղամօրուս, բայց դուրս էր խելօք արտայայտութիւնից։ Նայուածքը բուժ և անթափանցիկ, շարժուածքը անժոյժ և գոհակական։ հագած էր ասուեայ պարեգօտ և նստած բարձիւրով դարդարուն տախտի վրայ, երբ Անդրէաս երէցը ներս մտնելով գլուխ խոնարհեց իրեն, նա իսկոյն և առանց ողջունելու հարցրեց։

— Տէր-Անդրէաս, աւետարանը պատուիրում է ստորադրեալին հնազանդ լինել իւր իշխանաւորին թէ՞ ոչ։

— Այո, առաքեալն ասում է. «Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց...» պատասխանեց երէցը, մի հարցական հայեացք ձգելով վարդապետի վրայ։

— Ոչ, այդ չէի ուզում լսել. նկատեց առաջնորդը. ես տէր չեմ, դու էլ ծառայ չես։ Տիտոսի թղթում ուրիշ պատուէր կայ գրուած. «Եւ յուշ արասցիր նոցա՝ իշխանութեանց հնազանդ լինել և հպատակ կալ...»։

— «... Եւ ամենայն գործոց բարութեան պատրաստ լինել», յարեց Տէր Անդրէասը նոյն պատուէրի շարունակութիւնը և լռեց։

— Այդպէս է. բայց դու ոչ հնազանդութիւն ես ցոյց տալիս բո իշխանաւորին և ոչ բարի գործ ես կատարում, ասաց վարդապետը դէմքը խոժոռելով։

— Ո՞րն է իմ յանցանքը, հայր սուրբ, հարցրեց երէցը առանց վրդովուելու։

— Քո յանցանքը... լսիր, ես կյիշեցնեմ քեզ։ Այստեղ պտնուող բոլոր բահանները, իրենց ձեռնադրութեան օրից արդէն գիտեն՝ որ իրենք, հասարակական որ և է գործի ձեռնամուկ լինելու համար՝ նախ և առաջ իշխանաւոր առաջնորդի հաճութիւնը պիտի խնդրեն...

— Բայց մի՞թէ ես թերացել եմ այդպիսի մի դէպքում, ընդհատեց երէցը։

— Ձեր Անապատում, ասում են, մարդկանց վարժեց-

նում են համբերութեան. բայց դու չես արդարացնում քո վարդապետարանի հռչակը, հեղինեց վարդապետը և ապա շարունակեց.— այն օրից ի վեր որ Ս. Թովմայի տասնհակ տարիներով փակուած տաճարի դուռը հրաշքով բացուեցաւ, Ագուկեաց առաջնորդական գահը, որի ժառանգորդն եմ ես, համարւում է նախաթոռ, Գիտես դու այդ հրաշքի պատմութիւնը:

— Գիտեմ. այդ փակուած դուռը բացուեցաւ իմ վարժապետներից մէկի, Պօղոս վարդապետ Մոկացու սուրբ աղօթքներով, պատասխանեց Տէր-Անդրէասը:

— Անկարելի է. այդ սուրբ վարդապետը չէր կարող լինել քո վարժապետը, կամ Պօղոս Մոկացին, բացառանչեց առաջնորդը:

— Նա ինքն էր. պնդեց երէցը:

— Ի՞նչ է ասում այս սնապարծը. դարձաւ վարդապետը միւս քահանաներին:

— Այդպէս է, հայր սուրբ. տաճարի դուռը բացուել է Պօղոս վարդապետ Մոկացու ջերմեռանդ աղօթքով, վկայեցին մի քանի ծերունի քահանաներ:

— Ես ինքս այդ ժամանակ նորընծայ էի, և այդ հրաշքին ականատես. պնդեց Խցաձորի Տէր-Յովսէփ քահանան:

Առաջնորդ վարդապետը, որ մի նորեկ էր և ոչ քաջ ծանօթ այդ պատմութիւններին, այլայլուեցաւ, տեսնելով որ տաճարի դուռը բացող սուրբ հռչակուած մարդը, որով ինքը կամենում էր պարծենալ, դարձեալ Հարանց Անապատի անդամ և նոյն իսկ Տէր-Անդրէասի ուսուցիչներից է: Նա մի անհանգիստ շարժում արաւ, սաթէ համարիչը արագ արագ քաշեց և ապա նորէն դէմքը խոժռելով ասաց.

— Աւելի վատ. դու ուրեմն կրկին յանցանք ես գործել, մին՝ որ անարգել ես քո վարժապետի յիշատակը և

միւս՝ որ անպատուել ես քո վիճակաւոր առաջնորդին։

— Բայց ի՞նչ եմ արել ես, վերջապէս, հարցրեց Տէր-Անդրէասը յուզուելով։

— Ահա թէ ի՞նչ։ Երկու օրից յետ այստեղ պիտի լինի արեղակնափայլ Չահր, (որի աթոռը, խնդրում եմ Աստծուն, անսասան պահել յաւիտեան)։ մեր ժողովուրդը պիտի դիմաւորէ նրան։ Արդ, ասան ինձ, այդ դիմաւորութեան հանդիսի մասին հոգալը քո պարտաւորութիւնն է թէ՛ առաջնորդի։

— Այդ հանդիսի համար ես ոչինչ չեմ հոգացել, պատասխանեց երէցը խոնարհութեամբ։

— Բայց երէկ երեկոյեան բաղմամարդ ժողով ես ունեցել քո տանը. ճառեր ես խօսել, կարգադրութիւններ ես արել... Այնպէս չասացիր, Տէր Սարգիս. վերկաց և վկայիր, դարձաւ վարդապետը Անդրէաս երէցի պաշտօնակցին, որ նստած էր միւս քահանաների շարքում։

Տէր Սարգիսը, որ, ինչպէս գիտենք, երիտասարդ երէցի հակառակորդն էր և նրա մասին էլ չարախօսել էր վարդապետի առաջ, վեր թռաւ տեղից աշխուժով և հանդիսաւոր դիրք առնելով՝ սկսաւ խօսել։

— Այո, իմ պաշտօնակից եղբայրը բաղմամարդ ժողով է ունեցել երէկ. այդ ժողովի մէջն է առաջին անգամ Չահի դալստեան լուրը յայտնուել և այդտեղ էլ առաջին անգամ սուրբ հայրապետի նամակը կարդացուել...

— Եւ յետոյ ինձ ուղարկուել, այնպէս չէ, ընդհատեց վարդապետը, և ապա դառնալով քահանաներին շարունակեց, — լսում էք, արժանապատիւ հայրեր, կաթողիկոսի նամակը վիճակաւորի ձեռքը հասնելուց առաջ կարդացուել է մի երիտասարդ և տակաւին նորընծայ համարուող քահանայի տանը... Այս ըմբոստութիւնն է թէ՛ ոչ, ասացէք։ Ես ձեզ հրաւիրել եմ այստեղ իբրև դատաւորներ։ Դատեցէք և տեսէք, եթէ յանցաւոր է՝ պատժեցէք, իսկ եթէ արդար՝ արձակեցէք։

Մի բանի քահանաներ, որոնք Տէր Սարգսի համախոհներն էին, վկայեցին որ յանցաւոր է երէցը և, հետեապէս, պիտի պատժուի։ Իսկ Տէր Սարգիսը, որ վաղուց սպասում էր այդպիսի մի բարեյաջող դէպքի՝ իւր կարծեցեալ հակառակորդին տապալելու համար, բացազանչեց։

—Մինչև այսօր, արժանապատիւ հայր, դա գործել է հարիւրաւոր այդպիսի յանցանքներ, որոնք ուղղուած են եղել մեր դէմ։ Դա սառեցրել է ժողովրդի սիրտը մեզանից։ ձգել է մեր վարկը նրանց առաջ, ամեն տեղ և ամեն գործում առաջ ընկնելով՝ մեզ թողել է ետքին։ այդպիսով դա բռնացել է նաև մեր իրաւունքների վրայ։ ժողովուրդը կարծես էլ չէ ճանաչում մեզ, իւր կարիքների ժամանակ՝ նա փոխանակ աւագ քահանաներին դիմելու, դիմում է այս նորընծային և այդպիսով՝ շահ է թէ՛ արդիւնք, դրա ձեռքն է յանձնում...

—Այդ մի կողմը թող, Տէր-Սարգիս, խնդիրը շահուն կամ արդիւնքին չէ վերաբերում, ընդհատեց առաջնորդը։

—Այո, Սրբազան, (Տէր-Սարգիսը իբր թէ սխալմամբ՝ տուաւ վարդապետին այդ տիտղոսը) ես էլ հէնց այն էի ուզում ասել թէ՛ մինչև այսօր խնդիրը մեր շահուն էր վերաբերում՝ այդ պատճառով մենք լռում, համբերում և ներում էինք Տէր-Անդրէասին։ Բայց այժմ, երբ նա ձեռք է պարզում դէպի առաջնորդի իրաւունքները՝ նրան անկարելի է ներել։

—Հա, այդպէս պիտի խօսես. այդ է իրաւացին, հաւանութիւն տուաւ վարդապետը և ապա աչքերը շուրջ յածելով՝ հարցրեց միւսներին։—Դուք ի՞նչ ունիք ասելու։

—Ըմբոստ է... յանցաւոր է... պէտք է պատժուի, ձայն տուին մի բանի հոգի, բայց մեծամասնութիւնը լռեց։

Անդրէաս երէցը, որ մինչև այն անխօս ու անվրդով լսում էր իւր դէմ եղած ամբաստանութիւնները, գլուխը

վեր առաւ և մի բարձրայօն հայեացք ձգելով նախ իւր շրջապատի և ապա առաջնորդի վրայ, ասաց.

— Ինձ մնում է կրկնել Առաքեալի խօսքերը թէ՛ «խնդրեմք յԱստուծոյ զի մի ինչ արասցէ ձեզ չար, ոչ զի մեք ընտիրք երեսացուք, այլ զի դուք զբարիս գործիցէք... Խրախ եմք, յորժամ մեք տկարանայցեմք և դուք զօրաւորք իցէք...»։ Այո, հարք և եղբարք, կցանկայի որ դուք զարդարուած լինէիք առաքինութեամբ այնչափ, որ ես, ձեր համեմատութեամբ, համարուէի անպիտան և նախատուէի ձեզանից իմ տկարութեան համար, որ ժողովուրդն, իւր թշուառութեան օրերում միտիթարուէր ձեզմով և կարեաց ժամանակ՝ օժտուէր ձեր իմաստութեամբ... և ես չէի նախանձիլ ձեր այդ առաւելութեան։ Բայց նոյն առաքեալը մեզ հրամայում է. «խօսեցարձեռք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, զի եմք միմեանց անդամք»։ հետևապէս, ոչ թէ իմ անձը պաշտպանելով՝ այլ իմ պաշտօնին հաւատարիմ մնալու պարտաւորութեամբ պէտք է ճշմարտութիւնը խօսեմ, «զի եմք վերակացու ճշմարտութեան»։

«Առաջնորդ հայր, երբ ինձ ասացին թէ՛ Խանից հրաման ես ստացել և այդ պատճառով է որ հրաւիրում ես ինձ ու իմ պաշտօնակիցներին, անչափ ուրախացայ, զի հաւատացի թէ՛ ժողովրդի օգտին շահաւոր գործ մի սկսելու համար՝ խորհուրդ պիտի անես մեզ հետ։ 2^է որ, այս օրերում մեզ սպառնում է մի չարիք, որի առաջն առնելու համար ամենից առաջ դու պիտի մտածես։ Բայց աւանդ. եկայ և տեսայ որ քեզ ու քո հաւատարիմներին զբաղեցնում է ոչ թէ ժողովրդեան ցաւը, այլ մի Տէր-Անդրէաս դատելու և պատժելու խնդիրն. որ ձեզ սարսափեցնում է՝ ոչ թէ ձահի ձեռքով լինելիք «մանկաժողովրդ», որ ամեն մի Ագուկեցու տուն լաց ու կոծով պիտի լցնէ, այլ այն որ՝ մի երէց պակաս յարգանք է մա-

տուլցիլ առաջնորդին, կամ զրկանք պատճառել մի Տէր-Սարգսի...

— Էլ ի՞նչ հարց ու փորձ է հարկաւոր, բացագանչեց հայր սուրբը. տեսնում էր, ու Քահանայք, ի՞նչ յանդուգն լեզուով է խօսում սա իւր առաջնորդի հետ. կոյ ձեր մէջ մինը, որ չդատաւարտէ սրան:

— Ինձ իրաւունք կունենայիր դատաւարտել ամենքդ, եթէ երբ և իցէ թերացած լինէի իմ պարտաւորութեանց մէջ, դարձաւ երէցը քահանաներին. բայց ճշմարտութիւն խօսելու համար ոչ ոք ունի իրաւունք ինձ դատաւարտելու. մանաւանդ թէ՛ պարտաւոր իսկ էք միանալ ինձ հետ և կրկնել այն, ինչ որ ես եմ խօսում. դի ժողովուրդն այս վայրկենին վտանգի մէջ է և մենք սրբազան պարտք ունինք այդ վտանգն անցնելու համար միայն գործել: Ով որ այս միջոցում դրա հակառակն է անում, ով որ հասարակաց բարիքը թողած իւր անձնական խընդրով է զբաղւում՝ նա մի դաւաճան է...:

— Զէք լսում այս մարդուն. ու Քահանաներ ինչո՞ւ համար էք լռել... Բացագանչեց առաջնորդը զայրոյթից գրեթէ դողալով:

— Տէր Անդրէաս, Տէր Անդրէաս ի՞նչ է պատահել. դու կորցրել ես քեզ... մօտենալով երէցին շշնջաց ծերունի Տէր Յովսէփը:

Նոյնպէսի բացագանչութիւններ արին այս ու այն կողմից: Բայց Տէր Անդրէասը մնաց անսասան:

— Աղաչում եմ, հարք և եղբարք. յանդգնութիւն մի համարէք իմ խօսքերը, շարունակեց նա նոյն եռանդով. Ձեզանից շատերը ճանաչում են ինձ մանկութիւնիցս ի վեր և գիտեն իմ խոնարհութեան և համեստութեան չափը: Միթէ մինչև այսօր, մեր առանին յարաբերութեանց ժամանակ, լսել էք դուք ինձանից մի համարձակ խօսք, կամ նշմարել իմ աչքերում մի բարկացայտ հայեացք...

բայց այսօր ես առանին գործով չեմ զբաղած և ոչ իսկ հանգիստ խօսելու իրաւունք ունիմ. այստեղ ես կանգնած եմ իբրև դատախազ իմ ժողովրդի կողմից, որի առաջ այս վայրկենին բացուած է փորձութեան անդունդ, որ սպառնում է կլանել նրան իւր մէջ... Ես պահանջում եմ որ այդ անդունդը փակելու վրայ մտածէք. իսկ դուք ի՞նչ էք պատասխանում, կամ ի՞նչ հրամայում: Միթէ իրաւունք ունիմ ես լռել, կամ դուք ինձանից կարող էք լռութիւն պահանջել: Պատերազմի ժամանակ ամեն մի քաջ զինուոր իրաւունք ունի նախատել և, մինչև անգամ, ի մահ հարուածել իւր հրամանատարին՝ եթէ սա քաջապէս կռուելու և զօրքին արիութիւն ու կորով ներշնչելու փոխարէն՝ ծակամուտ է լինում, կամ իւր անձի վրայ մտածում: Եկեղեցւոյ զինուորութեան մէջ՝ ես մի սոսկ զօրական եմ, իսկ մեր առաջնորդը հրամանատար. նա դանդաղում է գործել և ես յիշեցնում եմ նրան իւր պարտքը. ի՞նչ ունիք սրա դէմ առարկելու:

Տէր Անդրէասի խօսքերը տպաւորութիւն արին քահանաների վրայ, ուստի նրանցից ոչ ոք չպատասխանեց նրան: Այդ նկատեց առաջնորդը և ճնշուեցաւ: Բայց որպէս զի զգալի չդարձնէ իւր պարտութիւնը, նա մի այլ ընթացք տուաւ վէճին:

— Ես գոհ եմ, ասաց նա, որ իմ քահանաների մէջ կան քեզ նման աներկիւղ ճշմարտախօսներ: Երկչոտութեամբ լռողը՝ ստոր է ստախօսից: Բայց ի՞նչպէս որոշենք կեղծիքը ճշմարտութիւնից: Արդե՞ծք դու դիտմամբ չի՞ս արգելք եղել իմ գործելուն՝ որպէս զի այժմ հրապարակաւ իմ անգործութիւնը դատապարտես:

— Ե՛ս. ինչպէ՛ս. գարմացած հարցրեց երէցը:

— Այո, դու. յարեց առաջնորդը. առանց իմ գիտութեան ժողով ես կազմել քո տանը. ինձանից առաջ կարդացել ես կաթողիկոսի գիրը և առանց իմ հրամանին

սկսել ես գործել, որպէս զի այժմ առիթ ունենաս քեզ կռուող զինուոր իսկ ինձ՝ խուսափող հրամանատար հրշակակու։ Այսպէս է թէ՛ ոչ։

—Ո՛չ։ Նախ իմ առաջնորդի թուրութիւնը ինձ չի կարող ուրախացնել։ ուրեմն դրա համար ես չէի աշխատիլ։ Երկրորդ՝ ես ոչ մի ժողով չեմ գումարել, այլ իմ ժամաւորները իրենք են, ըստ սովորութեան, հաւաքուել ինձ մօտ՝ Չահի գալստեան առթիւ խօսելու համար։ Երրորդ՝ կաթուղիկոսի գիրը, որ գրուած է եղել բանտում՝ ածուխով և մի պատառ թղթի վրայ, ուղղուած է եղել ժողովրդին և ոչ թէ քեզ։ հետեապէս, այդ գիրը կարող էր կարդալ ամեն որ, և առաջին անգամ կարդացել է Ճղնայի քահանան, ապա Խօջա-Անձրեւը և վերջը ես...

—Հա. ինչու Խօջա-Անձրեւը այդ նամակն առաջ քեզ է բերել և ոչ ինձ, ընդհատեց յանկարծ առաջնորդը։

—Երևի նրա համար որ կաթուղիկոսը գրել էր թէ՛ «շտապեցէ՛ք վտանգի առաջն առնել, քանի աւերող ոտքը չէ կոխել ձեր հողը»։ Խօջա-Անձրեւը ճանաչում է ինձ և գիտէ որ ես գործելու ժամանակ դանդաղել չգիտեմ։ ուստի նամակը յանձնեց ինձ որ կարդամ և խօսոյն գործի սկսեմ։

Դարձեան Նախատինք... ուրեմն մենք պիտի դանդաղէ՛նք, հարցրեց առաջնորդը յուզուելով։

—Մի զայրանար, հայր սուրբ. ապացոյցը մեր առջին է։ Կաթուղիկոսի գիրը ես երէկ երեկոյ կարդացի իսկ դու այսօր առաւօտ. զանազանութիւնը մի գիշեր է, որի ժամանակ քնած ենք եղել ամենքս։ Բայց այս մի օրուայ ընթացքում՝ ես ինձ վերաբերեալ գործի մեծ մասն աւարտեցի, մինչ դու դեռ նոր ատեան ես գումարում ինձ դատելու համար։ Ինչպէս արդեօք չհաւատամ թէ՛ իմ դատի գործն աւելի է քո ուշը գրաւում, քան Չահաբասի աղետաբեր գալուստը։

Առաջնորդը տեսաւ որ երիտասարդ երէցը ոչ միայն չէ յաղթահարուում, այլ և հետզհետէ աւելի է նշաւակում իրեն. ուստի շտապեց վերջ տալ պայքարին և, մի և նոյն ժամանակ, դատապարտել նրան անգործութեան:

— Տէր Անդրէաս, քո նախկին համեստութիւնից շատ ես հեռացել, ասաց նա քահանային, բայց այդ մասին այլ ևս չեմ կամենում խօսել: Դու միայն ասա թէ՛ ի՞նչ ես արել այսօր. դուցէ գործել ես մի որ և է. սխալ. այդ ես պիտի իմանամ, որպէս զի քանի ուշ չէ՛ շտապեմ ուղղել: Որովհետեւ ինձ վրայ մեծ պատասխանատուութիւն կայ դրուած:

— Սխալ. չեմ կարծում: Ես միայն այցելել եմ Ագուլիսի ու Դաշտի բոլոր ընտանիքներին և կարգադրել որ հեռացնեն անմիջապէս հարսնացու աղջկերանց, գեղեցիկ պատանիներին և, առհասարակ, այն երեխաներին, որոնք կարող են պիտանի համարուել հարեմական ծառայութեանց համար:

— Եւ այժմ, ուրեմն, Ագուլիսում տեսքով՝ տղաներ չկան:

— Մնում են մի քանի տանեակ իմ աշակերտների մէջ, նրանց էլ վաղը պիտի տանեմ Ցղնայ:

— Տեսնում ես, Տէր Անդրէաս, ի՞նչ մեծ չարիք ես հասցրել մեզ. բացազանչեց առաջնորդը՝ աչքերը մեծ բանալով և, կարծես, ուրախանալով:

— Չարիք... զարմացած հարցրեց երէցը:

— Այո, չարիք. քո հապճէպ ու անխորհուրդ վարմունքով վտանգի մէջ ես դրել մեզ... Թէ ինչո՞ւ էի դայրանում քո յանձնապատանութեան վրայ:

— Բայց ի՞նչ չարիք եմ հասցրել:

— Ի՞նչ չարիք. Թէ, առ կարգա խանի հրամանը և կիմանաս... բայց ոչ, ինքս կկարգամ:

Այս ասելով վարդապետը հանեց, ծոցից մի ծալած

Թուղթ և խնամքով բանալով այն՝ սկսաւ կարգալ.

« Երկնքի թագաւորութեան սիրելի, արևի պէս պայ-
 « ծառ և փայլակի պէս զօրեղ՝ Թագաւորների Թագաւոր
 « և Չահերի Չահ Մեծ Աբասի

« Խոնարհագոյն ծառայ

« Էրմենիստանի և Գիւրջիստանի խան Էմիրը-Գիւնէից
 « Հրաման —

« Հայոց Խալիֆի հաւատարիմ սպասաւորին և Ագուլիսի
 « Արժանայարգ Առաջնորդին:

« Յայտնի լինի ինչպէս քեզ նոյնպէս և Իրանի հզօր
 « զահի հպատակ Սիսիանի ժողովրդին, մեկիքներին, իշ-
 « խաններին, բէկերին, դատաւորներին, բենդխուդանե-
 « րին, խօջաներին և բոլոր պատուելիներին՝ որ աշխար-
 « հի պարծանք և երկնքի պարզև Արեղականափայլ Չահը
 « որոշեց բաղդաւորացնել Ագուլիսը իւր բարձր այցելու-
 « թեամբ, որ տեղի կունենայ սոյն Ջէմադի-ուլ-էլալ ամ-
 « սոյ 8-ին, մեծափառ իմամ Ալիի ծննդեան օրը:

« Արդէն հրամայուած է Ագուլիսի Վէրիլին տնօրի-
 « նել ինչ որ արժանն է Նորին Մեծութեան ընդունելու-
 « թեան համար: Քեզ ևս հրամայում էմ առանձնապէս՝
 « պատրաստել հայ ժողովրդի և հոգևորականութեան կող-
 « մից այնպիսի փառաւոր ընդունելութիւն, որի նմանը
 « տեսած չլինի իմ Չահը ոչ Երևանում, ոչ Նախճուա-
 « նում և ոչ իսկ նախկին հարուստ Ջուղայում: Քո ժո-
 « դովուրդն ու հոգևորականութիւնը պիտի դիմաւորեն
 « իմ վեհապետին Որտուտտում: Այդտեղ ներկայ պիտի
 « լինին բոլոր այն ընտիր դասակարգերը, որոց անունը
 « յիշեցի, այլ և հայոց բոլոր հոգևորականութիւնը իւր
 « փայլուն արդ ու զարդով: Այդտեղ պիտի լինին Ագու-
 « լիսի բոլոր գեղեցիկներն ու գեղեցկուհիները — մեծ թէ
 « փոքր, առանց քօղերի ու ծածկոցների. այլ և Սիսիա-
 « նի բոլոր կուսանոցների, ինչպէս Ագուլիսի ու Չոռութի

« Նոյնպէս և Զնհերի ու Հալիձորի միանձնուհիները, որոնց
 « թիւը, ինչպէս յայտնի է մեզ, հասնում է մի քանի հարիւ-
 « րի: Ընդհանուր զնացքը կարգաւորելու իրաւունքը տրուած
 « է Ագուլիսի մեր Վեքիլին: Նրա պահանջները պիտի կա-
 « տարուին անյապաղ և առանց ընդդիմութեան, մինչև
 « անգամ, եթէ կաքաւողների խմբի համար ընտրելու
 « լինի նա հայոց գեղեցկուհիներից, իսկ չէրբէթ ու գի-
 « նի լցնելու պաշտօնը յանձնելու լինի երիտասարդ մի-
 « անձնուհիներին:

« Ընդունելութեան ամենափոքր թերութեան հա-
 « մար պատասխանատու պիտի ճանաչուին՝ պարսիկների
 « կողմից—իմ վեքիլը, իսկ հայոց կողմից—հոգևոր ա-
 « ռաջնորդը:

« Գրուեցաւ Երևանում, Զէմադի-ուլ-էվալ ամսոյ 3-ին
 « Հիջրի 1034 թուին»:

—Ի՞նչ կպատասխանես այժմ սրան, հարցրեց ա-
 ռաջնորդը՝ Խանի հրամանը կարգալուց և նորէն խնամ-
 քով ծոցը գնելուց յետ:

—Ի՞նչ պիտի պատասխանեմ. չգիտեմ. յարեց Տէր
 Անդրէասը:

—Այստեղ ուղղակի ասուած է թէ՛ պէտք է Չահի
 առաջը տանենք մեր բոլոր գեղեցիկներին ու գեղեցկու-
 հիներին: Արդ, դու որ ամբողջ աւանը դատարկել ես, էլ
 ես որո՞նց պիտի տանեմ:

—Տգեղներին: Ագուլեցիք հօ ստորապրութիւն չեն
 տուել Չահին թէ՛ անպատճառ գեղեցիկ որդիներ պիտի
 ծնեն:

—Բայց դա կլինի յանդուգն խաբէութիւն. Խանը
 մեզ ուղղակի հրաման է գրում. ի՞նչպէս կարող ենք ան-
 սաստել այդ հրամանին:

—Այդ մի և նոյն խանը գաղտնի իմացուել է կա-
 թուղիկոսին թէ՛ Չահը մտադիր է «մանկաժողով» անել:

ուրեմն և անուղղակի խորհուրդ է տուել՝ շտապել այդ չարիքի առաջն առնել: Արդարասէր Ամիր-գիւնէն չի կամենում որ մեր զաւակները Չահի դուռը դնան, դու ինչո՞ւ ես հակառակը պահանջում:

— Իսկ այս հրոմանը Ամիր-գիւնէինը չէ:

— Դա պաշտօնական թուղթ է. Չահի նախարարը չէր կարող ուրիշ կերպ գրել. բայց դու իրաւունք ունիս ուրիշ կերպ հասկանալ կամ կատարում տալ նրան:

— Դու կամենում ես կախաղան բարձրացնել տալ ինձ:

— Քեզ ոչ ոք չի կախիլ մի անիրաւ հրաման պալատ եռանդով կատարելուդ համար: Եւ հէնց մեր սխալն այն է՝ որ այդ բարբարոսների ամեն պատուէրները կատարում ենք ճշգրտութեամբ ամեն պահանջները լցնում ենք անգիմադիր, որով հետզհետէ գրգռում ենք նրանց խնորժակը՝ պահանջել և ստանալ աւելի ու աւելի: Այդպիսով նրանք սովորել են նայել մեզ վրայ իբրեւ անասունների վրայ. ուստի և շարունակ կ[թում են մեր կաթը՝ ստիճաններնիս ցամաքեցնելու չափով. դնում են մեր վզին արօրի ծանր լուծը և հողի փոխարէն հերկել տալիս մեզ առապարներ. բարձում են մեր մէջքին դժուարատար բեռներ և վարում մեզ դէպի լեռնալանջերը. և ի վերջոյ, երբ քաղցնում են՝ անգթաբար մորթոտում և ուտում են մեզ... Բայց վերջ պէտք է լինի մի օր այս բոլորին [թէ՞ ոչ:

— Ի՞նչ վերջ կարող է լինել. բանի որ Աստուած դրանց ձեռքն է մատնել մեզ:

— Աստուած ոչինչ չէ արել. ամեն ինչ մենք ենք արել. Երբ տասը հրամանին հինգը կկատարենք. երբ շատ պահանջներից միայն մինը կլցնենք, երբ ստացած հալուածների փոխարէն մինն էլ մենք կչափենք, այն ժամանակ սրանք երես չեն առնիլ և մէկի տեղ տասը չեն պահանջիլ: Չահը հրամայում է որ մեր բոլոր գեղեցիկները հանենք իւր առջևը, որպէս զի նրանց միջից ընտրէ

իւր սպանդանոցին յարմար զոհեր. մենք ինչու պէտք է այդ անհարգար ու գարշելի հրամանը կատարենք կուրօւրէն...

—Սը՛սս... ինչ բառեր ես գործածում, երկիւղով ընդհատեց առաջնորդը:

—Հա, ինչ է. վախենում ես. բայց ես չեմ վախենում. աշխարհի առաջ կգոռամ. Ջահին իրեն կըողորեմ թէ՛ սա մի գարշելի. մի գազանային պահանջ է, որ նա անում է իւր հայ հպատակներից...

—Լսի՛ր, Տէր Անդրէաս. դու սաստիկ գրգռուած ես և խօսածդ չես հասկանում, տեղից վեր կենալով խօսեց առաջնորդը. գնահ տուն և հանգստացիր. իսկ վաղը ոչնչի չձեռնարկես. ամեն ինչ ես կտնօրինեմ. և յոյս դնիմ որ գալիք չարիքի առաջն առնեմ...

—Ես կերթամ. բայց անդործ նստել չեմ կարող. վաղն և եթ իմ աշակերտները Ցղնայ պիտի տանեմ. ես նրանց չեմ թողնիլ այստեղ:

—Օ՛հ և ճ՛ն, այդպէս բան չանես. թող գոնէ հարիւրաւոր տգեղների մէջ մի քանի տասնեակ շնորհքով տղաներ գտնուին: Մի գրգռիր Ջահի գայրոյթը մեր դէմ. բարիք անելու փոխարէն դու չարիք կբերես մեր գլխին:

—Հազարաւոր ամբոխի մէջ եթէ պակաս 'լինին մի երեք տասնեակ մանուկներ, բնաւ աչքի չեն ընկնիլ:

—Սյո՛, այդ ճիշդ է. բայց Ագուլիսի Վէքիլը գիտէ որ Խցաձորում աշակերտներ ունիս դու. Ընտանիքների միջից պակասածները, ի հարկէ, չեն նկատուիլ. բայց քո աշակերտների նուագութիւնը աչքի կընկնի իսկոյն, որովհետեւ նրանց թիւը յայտնի է Վէքիլին:

Տէր Անդրէասը մի վայրկեան լռեց և ընկաւ մտածութեան մէջ: Ապա գլուխը բարձրացնելով վճռաբար ասաց.

—Ոչ. ես նրանց կծածկեմ, կանհետացնեմ. թող թէ

կուզ դրա համար իմ գլուխը կտրեն. «լաւ է մեզ՝ զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս և մի ամենայն ազգս կորիցէ...»:

— Բայց, Տէր Անդրէաս, քո գլուխը չեն կտրիլ, այլ իմը կկտրեն, յարեց առաջնորդը. որովհետև ամեն մի թերութեան համար Խանն ինձ է պատասխանատու ճանաչում:

— Հոգ չէ. դու ժողովրդի առաջնորդն ես և հարկը պահանջած ժամանակ պարտաւոր ես քո անձը տալ նրա փոխարէն: Լաւ է որ յիմնի, երեսնի և նոյն իսկ հնգի փոխարէն մինը մեռնի. առանց զոհի փրկութիւն չկայ...:

— Չէ, բարեկամ, երիտասարդ ես և անփորձ տղայի պէս ես խօսում: Մահը չտեսած մի արհամարհիլ նրան: Գնահ, գնահ և անհոգ եղիր, ես ամեն ինչ կկարգադրեմ:

— Կարգադրիր, ինչ վերաբերում է քեզ. իսկ իմ աշակերտների համար ես կհոգամ, ասաց Տէր Անդրէասը և պատրաստուեց դուրս գնալ:

— Քո աշակերտները անձեռնմխելի կմնան. այդ մէկը ինձանից պահանջիր դու, ասաց առաջնորդը:

— Ներիր ինձ. չեմ կարող այս դէպքում վստահանալ քո խոստման:

— Եթէ աւելի յամառես, կալանաւորել կտամ քեզ այս գիշեր. իսկ եթէ ինձ չլսելով աշակերտները տանես ծղնայ, վաղն և եթ վերադարձնել կտամ նրանց այն տեղից, «և եղիցի վերջինն չար քան զառաջինն» սպառնաց առաջնորդը:

Տէր Անդրէասը մի սուր հայեացք ձգեց վարդապետի վրայ, շարժեց գլուխը տխրութեամբ և առանց մի բառ արտասանելու դուրս գնաց ընդունարանից:

— Այս մարդը կամենում է որ մենք ամենքս զոհուինք իւր փառամոլութեանը, ասաց առաջնորդը և արհամարհանօք ժպտաց:

—Այո, այո, միայն իւր փառամոլութեանը, յարեց Տէր Սարգիսը. դա իրանից զատ ուրիշ ոչ որի չի տեսնում:

—Փարիսեցի է. իսկական փարիսեցի, ձայն տուաւ Տէր Սարգսի համախոհներից մինը:

—Ամենքդ էլ սխալոււմ էք. նա ազնիւ հոգի է և արժանաւոր քահանայ. լուրջ ձայնով նկատեց ծերունի Տէր Յովսէփը և վեր կացաւ տեղից:

Ժողովականները հետևեցին նրա օրինակին և հետզհետէ ցրուեցան:



Հետևեալ առաւօտ Տէր Անդրէասը դուրս չեկաւ փողոց: Աշակերտներին Ցղնայ տանելու միտքը նա թողել էր առ ժամանակ, մինչև որ տեսնէ թէ՛ հանգամանքներն ինչ ընթացք են ստանում:

Բայց նախընթաց երեկոյեան տեղի ունեցած պայթարը ծանր տպաւորութիւն էր արել Տէր-հօր վրայ: Թէ՛ պէտ նա եղելութիւնը պատմել էր ընտանիքին և նրանից սփովական շատ խօսքեր լսել, այսուամենայնիւ իւր սիրտը տակաւին տխուր և հոգին խռոված էր: Դառնալով եկեղեցուց, ուր աւելի էր գրգռուել Տէր-Սարգսին տեսնելով, նա լուռ ու մտայոյզ անցուղարձ էր անում սենեակում երկար ժամանակ, մինչև որ Տիրուհին յիշեցրեց նրան, թէ դպրոց իջնելու ժամանակ է: Բայց Տէր-հայրը չլսեց նրան և շարունակում էր իւր անցուղարձը: Տիրուհին անհանդստացաւ: Այս առաջին անգամն էր՝ որ ամուսինը անուշադիր էր թողնում իւր խօսքը և անփոյթ գրտնուում դէպի պարապմունքը: Նա մօտեցաւ երէցին և, կամենալով, կարծես, կասեցնել նրա ընթացքը, ասաց.

—Աշակերտները վաղուց սպասում են քեզ. գնա՛ պարապիր, դրանով գուցէ տխրութիւնդ ցրուի՛:

Տէր Անդրէասը կանգ առաւ. նայեց տխրահուն և ասես թէ յանկարծ արթնացաւ: Մանկամարդ կնոջ աչքերում նա այնքան սէր ու գորով տեսաւ, որ իւր տըխրութիւնը մի վայրկեան մոռացաւ:

«Գնա՛ պարապիր, դրանով գուցէ տխրութիւնդ ցըրուի...» Այդ խօսքերը այնքան մեղմ ու քաղցր հնչեցին իւր ականջին, որ դրանցից զգացած հաճելի տպաւորութիւնը չխանդարելու համար, երիտասարդ էրեցը ոչ մի առարկութիւն չարաւ:

—Լաւ ասացիր, կերթամ. պատասխանեց՝նա և փակեղն առնելով՝ իջաւ դէպի դարատուն:

Աշակերտները, քարէ սեղանի շուրջ շարուած՝ ոմանք սովորում և ոմանք խօսակցում էին. տեսնելով քահանային՝ ստքի ելան խօսոյն: Տէր հայրը գլխի լուռ շարժումով ողջունեց նրանց և նշան արաւ աղօթելու: Աշակերտներից մինը բարձր ձայնով սկսաւ Տէրունական աղօթքը կարդալ: Երբ նա արտասանեց «Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ 'ի չարէ» խօսքերը, Տէր-հօր ջերմեռանդութիւնը ասես թէ աճեց, նա աղաչաւոր աչքերը բարձրացրեց դէպի երկինք և ձեռքերը տարածեց օդի մէջ: Նա կրկնում էր նոյն խօսքերը, բայց աւելի ջերմ հաւատով: Եւ երբ աշակերտն աւարտեց, երէցի շրթունքները տակաւին նոր աղօթքներ էին մըմնջում:

Վերջապէս նա նստեց սովորական տեղը և սկսաւ դաս հարցնել աշակերտներից: Բայց նրա սիրտը դարձեալ անհանգիստ և մտքերը ցրուած էին: Նա հագիւ էր վարդանում իւր ուշադրութիւնը կեդրոնացնել պարապմունքի վրայ: Եւ իւրաքանչիւր անգամ, երբ պատասխանելու համար մօտենում էին իրեն անջն աշակերտները, որոնք միւսներից աւելի առոյգ ու գեղեցիկ էին, քահանայի յուզ-

մունքը կրկնապատկուում էր. նա հաւատում էր, որ բըռ-
նաւոր շահը պիտի խլէ դրանց ծնողների գրկից, և առա-
ջաւոր հայերից ոչ որ պիտի կարենայ աղատել այդ զո-
հերին:

Վերջապէս դասերը մի կերպ աւարտելով՝ նա ար-
ձակեց աշակերտներին: Եւ առարկելով թէ՛ տկար է ին-
քը, պատուիրեց որ ճաշից յետ չգան այլևս պարապուելու:

Այնուհետև բարձրանալով իւր սենեակը, սկսաւ մտա-
ծել թէ ինչ հնար գործ դնի այդ տղաներին փրկելու
համար: Այս նպատակաւ երէցը կամ որոշում էր կանչել
ծնողներին և յայտնելով նրանց առաջնորդի պահանջը՝
տղայոց վիճակի տնօրինութիւնը թողնել իրենց կամքին:
Բայց յետոյ խորհելով թէ այդ բանից ծնողները կարող
են գրգռուել և առաջնորդի դէմ խռովութիւն յարուցա-
նել, որով և, գուցէ, աւելի վնասեն գործին, թողնում էր
այդ դիտաւորութիւնը: Ապա մտածում էր անուշադիր
թողնել հայր սուրբի պահանջը և տանելով աշակերտնե-
րին Յիշայ, յանձնել նրանց խօջայ Անձրևի կնոջը: Սա-
կայն այս միջոցն ևս ապահով չէր թւում, ըստ որում
դեռ յիշում էր առաջնորդի սպառնալիքը և, հետևապէս,
վախենում նրա անխոհեմութիւնից: Տէր Անդրէասը գի-
տէր որ ամենից աւելի զգոյշ պէտք է լինել տխմար հա-
կառակորդից, զի խելօք թշնամուց աւելի՝ նրա տուած
վնասը կլինի անդամանելի: Այս պատճառաւ, ահա, վեր-
ջին միտքն ևս թողնում էր անկատար:

Դեռ այս մտատանջութեան մէջ էր քահանան, երբ
ծերունի Ժամկոչը ներս մտնելով յայտնեց թէ՛ Ֆրանկնե-
րի (հայ Ունիթորների) կարգապետը գալիս է իրեն այցե-
լելու:

—Նա անցեալ օրն էլ այստեղ էր, ինչ փորացաւ
ունի, հարցրեց ինքն իրեն Տէր-հայրը և սակայն, քաղա-
քավարութեան համար, դուրս եկաւ նրան դիմաւորելու:

Յիողը հայր Մատթէոս Երազմոսն էր, մի բարձրահասակ և յաղթանդամ տղամարդ, որին հոգևորական սըքեմը մի առանձին շուք ու վեհութիւն էր տալիս։ Նրա ոչ խոշոր դէմքը ծածկուած էր հարուստ և գորշախայտ մօրուքով, որ իջնում էր մինչև գօտին։ Թաւ յօնքերի տակից նայող աչքերը թէպէտ կկոցուած կապիճների մէջ, բայց նայում էին սուր և թափանցող հայեացքով։ Զըրթունքների վրայ փայլում էր մեղմ ժպիտ, որ սակայն արտայայտում էր աւելի կեղծիք, քան սրտի բարութիւն։ Մօտենալով բահանային, հայր Երազմոսը ողջունեց նրան սիրով, իսկ վերջինս վայելուչ յարգանքով հրաւիրեց նրան իւր տանը։

Հայր Մատթէոս Երազմոսը հասարակ աստիճանի մարդ չէր։ Նա արքեպիսկոպոս էր և հռովմայ պապից կարգուած ընդհանրական առաջնորդ, որ հովուում էր նախճուանի և նրա շրջակայքի Միաբանող կամ Ունիթոր կոչուած հայ կաթողիկոսներին։ Նա ազգով հայ էր ու իւր նախկին ազգանունն էր որդի Միքայէլի։ Բայց երկար ժամանակ Խաթալայում մնալով և այդտեղ Դոմինիկեան կարգին յարելով՝ ձեռնադրուել էր վարդապետ և ապա եպիսկոպոս, և վերադարձել հայրենիք Երազմոս մականունով։ Եւ որովհետև ազգուրացներն ու հաւատափոխներն, ընդհանրապէս, աւելի ջերմեռանդ են լինում նոր ընդունած կրօնի մէջ և աշխատում են օտարանալ հինից ոչ միայն հոգևո՛վ ու սրտով այլև կոչմամբ ու անունով, ուստի հայր Երազմոսն ևս այդ դիտումով թողել էր ազգանունը։ Նրա հօտի անդամներն իսկ, հետեւելով թէ՛ նախկին և թէ՛ վերջին առաջնորդների օրինակին կամ հրամանին, փոխում էին հայ ազգանունն *Եան* կամ *Եանց* վերջաւորութիւնը և վրան աւելացնում լատինական *դի* մասնիկը, իբր թէ գլխովին լատինաճալու համար։ Այդ ձևով կազմուած ազգանունները, հարկաւ, նախճուանի ու

Երնջակայ ձորերում, Սիւնեցի հայի ականջին՝ հնչում էին իբր ծաղրանուններ։ Եւ ամեն անգամ երբ նրանք լսում էին Թումաս Դի-մահտեսի-Պետրոս, Օվանէս Դի-Միրզայ, Պիոս Դի-Յաղուբ, Նդիա Դի-Հայրապետ և այլ նման անուններ, ծաղրում այսպանում էին ազգուրացների այդ միմոսական զունափոխութիւնը և հեզնում, լմանաւանդ, նըրանց առաջնորդների այդ մասին ունեցած նախանձախնդրութիւնը։ Բայց վերջինները միայն այդ չնչին բաներում չէին նախանձախնդիր։ Այդ «չնչիները» ապացուցանում էին այն՝ թէ որպիսի մոլեռանդութեամբ էին տոգորում նրանք իրենց հետևողներին։ Ապա թէ ոչ՝ նշանաւոր դէպքերը, կամ կշիռ ունեցող խնդիրներն երբէք չէին վրիպում նրանց ուշադրութիւնից։ Եւ եթէ այդպէս չլինէր, Սիւնեաց նահանգի նշանաւոր դաւաճները — Նախճուանը, Ջահուկը, Երնջակը նրանց ձեռքը չէին անցնիլ, ամեն տեղ և ամեն անկիւնում Ունիթօրների ցանցերը չէին լարուիլ և հայադաւաններին հարիւրներով չէին որսալ։ Մխիթար Աբարանցու և Յովհաննէս Քոնեցու արժանաւոր յաջորդները, Հռովմից տրուած հրահանգների համեմատ, անընդհատ գործում, հայ եկեղեցւոյ հիմունքը փորում և ազգի ամբողջութիւնը քայքայում էին, որպէսզի արեւելքում հայոց անկախ եկեղեցին կործանելով՝ նրա աւերակների վըրայ Հռովմայ անազգ ու անհայրենիք եկեղեցին հաստատեն։

Ահա այս մոլեռանդ գործիչներից մինն էր Մատթէոս Երազմոսը, որ պապից կարգուած էր Հայ-ունիթորների առաջնորդ, նոյն իսկ վերջինների կամքի հակառակ։ Զի սրանք իրենց կողմից մէկին ընտրելով՝ ուղարկել էին Հռովմ ձեռնադրուելու, բայց Պապը աւելի շահաւոր էր համարել մերժել այդ ընտրութիւնը և Նախճուանի աթոռը յանձնել պրոպագանդայի արքանեակներից մէկին, որ հարկաւ, աւելի հաւատարիմ պիտի լինէր իրեն, քան ժողո-

վրդի առաջարկածը:

Հայր Երազմուսը հասնելով Սիւնիք, արդարև, գործել սկսաւ եռանդով: Բայց 'ի մեծ ցաւ իւր առաքողի, չէր կարողանում առատօրէն որսալ: Որովհետև այդ ժամանակ Սիւնեաց անապատի առաքեալները արդէն ցրուած էին հայ դաւառների մէջ և գործում էին մեծ յաջողութեամբ, մրցելով, մանաւանդ, պապականների դէմ:

Հայր Երազմուսը, ուր, առհասարակ, չէր սիրում ընդհարուիլ Հարանց Անապատի հոգևոր ղինողների հետ, վասնզինրանցից ամենաթոյլն անդամ, մարտնչում էր իւր դէմ աննահանջ կերպով, այսուամենայնիւ, շատ տեղերում ստիպուած էր լինում գործ ունենալ դրանց հետ, ըստ որում վերջինները հետևում էին Ունիթորներին քայլ առ քայլ և արդիւում նրանց՝ գործել ազատօրէն: Նոյն խակ այդ օրը Գերապայծառ Կարգապետը հաճել էր պատուել իւր այցելութեամբ հայոց եկեղեցու հասարակ սպասաւորին՝ դմանօրինակ մի արգելք բառնալու յուսով:

Մինչդեռ աննշան հայ վարդապետը՝ առաջնորդական պաշտօնի տէր լինելու պատճառով ոչ միայն զոռոգանում ու բարձրից էր նայում Տէր-Անդրէասի վրայ, այլև, նրա արժանիքն ու օգտակարութիւնը, ուրանալով՝ աշխատում էր ճնշել նրան և ստորացնել, զոհելով իւր կրքին, նոյն խակ հասարակաց շահը: Հայր Մատթէոս Գերապայծառն, ընդհակառակը, արք-եպիսկոպոս և ունիթորների Կարգապետ լինելով հանդերձ, չէր քաշուում խոնարհիլ ու անձամբ մտնել այդ երէցի տունը, պատուել նրան իւր այցելութեամբ, որպէսզի դրանով կարողանայ հասնել՝ ոչ թէ իրեն՝ այլ պապական աթոռին շահ բերող մի որևէ նպատակի:

Հայ վարդապետը մեծն ու օգտակարը զոհում էր փոքրին, ոչնչութեան. հասարակաց շահը ստորադրում էր անձնականին. մինչդեռ կաթողիկ Սրբ-եպիսկոպոսը գոր-

ծում էր հակառակը. նա իւր անձը ուրանում, իւր պատուասիրութիւնը ճշում էր, միայն կեթ իւր եկեղեցու կամ Պետի շահը խնամելու համար, Այսպիսի համեմատական առաւելութեան շնորհիւ, հարկաւ, կաթոլիկ կղերը պիտի տիրապետէր, իսկ հայ եկեղեցին՝ հետզհետէ ընկճուէր: Բայց իրօք, այդպէս չեղաւ: Միւսեաց արգաւանդ հողի մէջ կաթոլիքական ծառը հաստատուն արմատ չրքոնեց:— Որովհետեւ Հարանց անապատից ելնող մշակնեւորը շարունակ փորում, չորացնում էին այդ ծառի արմատները: Որովհետեւ ժամանակի անիշխանութեան ստեղծած ապականութիւնից դուրս, Հայ եկեղեցին դեռ ունէր անձնուէր մարդիկ, որոնք, թէև, փոքրաթիւ, բայց և այնպէս գործում էին հռանդով և մրցում քաջաբար:

Հայր Մատթէոս Երազմուսը եկել էր այսօր նուաճելու հէնց այդ գործող ու մրցող քաջերից մինին:

—Անշուշտ չես զարմանում որ Ագուլիս մտնելուցս ի վեր քեզ այցելում եմ երկրորդ անգամ, ասաց Հայր-Երազմուսը Երէցին՝ սովորական ողջոյնը նրան տալուց յետ:

—Գերապատիւ հայրը երևի կարևոր հրաման ունի ինձ տալու, պատասխանեց Տէր հայրը համեստութեամբ:

—Ոչ թէ հրաման, այլ խնդիր. խոնարհադոյն մի խնդիր:

—Որը կատարել չեմ մերժիլ, թէ ոյժերս ներեն:

—Օ՛, դրա համար դու շատ զօրաւոր ես... պատասխանեց Գերապայծառը և ապա անփոյթ կերպով ժպտալով աւելացրեց.—գործն, ասենք թէ վերջացած է. մնում է միայն քո հաճութիւնը ստանալ:

—Բայց ի՞նչ գործ է այդ, հարցրեց երէցը հետաքրքրութեամբ:

—Ի՞նչ պէտք է լինի. միթէ՞ չես գուշակում:—Քրիստոնէական եկեղեցին վտանգի մէջ է, բռնակալ թագա-

ւորը արդար հողիներին սպառնում է կորուստ... 28-
յսի «մանկաթողովի» մասին:

— Ի՞նչպէս չէ, լսել եմ:

— Եւ ի՞նչ միջոց ես գործ դրել այդ գաղանային
հարկահանութեան առաջն առնելու համար:

— Արել եմ, ինչ որ կարողացել եմ....

— Գիտեմ. շատերին հեռացնել ես տուել դէպի գիւ-
ղերը, ընդհատեց Գերապայծառը. գիտեմ մինչև անգամ,
թէ ո՞ր ընտանիք ուրտել է թագցրել իւր գեղեցիկներին:
Տէր Անդրէասը մի անհանգիստ չարժում արաւ և
աչքերը անթարթ նրազմոսի վրայ աղղկելով ասաց.

— Յոյս ունիմ որ քո այդ հետաքրքրութիւնը մեզ
վնաս պատճառելու նպատակով չէ եղած:

— Ո՛վ Տիրամայր, Սուրբ Աստուածածին, բացադան-
չեց հայր նրազմոսը ձեռքերը դէպի երկինք ամբառնա-
լով. — լուսաւորի՛ր դու խաւարած մտքերը, հաւատ ներ-
շնչիր կասկածով տանջուող սրտերին...: Ապա դառնալով
երիտասարդ երէցին՝ աւելացրեց. — Երբէք չէի յուսալ թէ
եկեղեցւոյ ընտիր և իմաստուն մի պաշտօնեայ, որպիսին
դու ես, կարող է հաւատալ թէ՛ մի արք-եպիսկոպոս կեա-
տարէ այնպիսի գործ, որ վնաս բերէ Քրիստոսի հօտը
գարդարող մանուկներին. թէ՛ նա կմոռանայ Յիսուսի Սուրբ
պատուէրը, որ ասում է. «Ո՛չ են կամք հօր իմոյ, որ յեր-
կինս է՝ թէ կորիցէ մի ՚ի փոքրկանցս յայսցանէ»:

— Մի մեղադրիր ինձ իմ կասկածոտութեան համար,
յարեց երէցը մեղմութեամբ. մինչև այսօր Ունիթորները
այնքան թշնամաբար են վարուել մեր եկեղեցու հետ, որ
ես իրաւունք ունիմ այժմ...

— Թերահաւատել այն բարիքի մասին, որ մեղանից
պիտի հասնի ձեզ, այնպէս չէ՞, ընդհատելով երէցին՝ հար-
ցրեց նրազմոսը:

— Այո. չեմ ծածկում ճշմարտութիւնը:

— Եւ երբէք չպէտք է ծածկել: Բայց այժմ, պատուելի եղբայր, մի կողմ պիտի դնենք ամեն թշնամութիւն. եկեղեցուն վտանգ է հասնում, դրա առաջն առնելու համար մենք պիտի միանանք:

— Միանանք... ինչպէս:

— Դուք պիտի ընդունէք փրկութեան այն միջոցը, որ ես առաջարկում եմ ձեզ:

— Այսինքն:

— Մի անմեղ միջոց, մի անվնաս ճանապարհ:

— Բարի. բայց ինչ միջոց է այդ:

— Դուք պիտի ցուցակագրէք և յանձնէք ինձ Ագուլիսի այն բոլոր ընտանիքների անունները, որոնք ունին գեղեցիկ տղաներ ու աղջիկներ, և ՚ի հարկին, յայտնէք Շահարասին, որ դրանք բոլորն էլ պատկանում են իմ հօտին:

— Ինչո՞ւ համար այդպէս անենք:

— Նրա համար՝ որ եթէ յիշածս ընտանիքներից մանուկներ վերցնէ Շահր, նրան յայտնեմ թէ՛ դրանք պատկանում են Սրբազան Պապի հօտին:

— Այդ առարկութիւնը չի փրկիլ մեր մանուկներին, նկատեց Երէցը:

— Ի՞նչպէս թէ չի փրկիլ, միթէ չես լսել այն մեհնաշնորհի մասին, որ շահր յատկացրել է Սրբազան պապի հօտին: Հայր Պօղոսն այդ մասին խօսել է կաթուղիկոսի հետ:

— Ո՞վ է հայր Պօղոսը:

— Միթէ չգիտես: Հայր Պօղոս Մարիա — Զիտտադինի. Սրբազան Պապի Գերապայծառ Նուիրակը:

— Այո, լսել եմ նրա մասին:

— Բայց լսելը բաւական չէ. պէտքէ իմանալ թէ՛ ինչ մեծ ծառայութիւն է արել նա քրիստոնեայ աշխարհին: Այսինքն, ոչ թէ նա, այլ Սրբազան պապի սուրբ նամակը, որ նա բերել է Շահին: Ծանօթ ես դու այդ պատ-

մութեան հետ:

— Լսել եմ մի քանի բան:

— Բոլորը պէտք է լսել. այդ կարևոր է:

— Այս ասելով՝ Հայր Երազմոսն իւր դիրքն ուղղեց. փակեղը, որ իջել էր ճակատի վրայ՝ բարձրացրեց և գր-լուխը վեր առնելով՝ նորէն սկսաւ խօսել:

— Դու գիտես, պատուելի եղբայր, թէ ի՞նչ գոռոյ թագաւոր է Չահաբասը: Նա երկիւղ չունի աշխարհի և ոչ մի հզօր տիրապետից: Բայց և այնպէս, մի տարի առաջ, երբ Հայր Պօղոս Չիտտազինին ներկայացաւ նրան Փարահաբադում — իբրեւ նուիրակ Սրբազան պապի և իբր դեսպան Փրանզի ու Սպանիոյ թագաւորների, Չահաբասը ընդունեց նրան ամենամեծ պատուով. նստացրեց ոսկեկար օթոցի վրայ և լսեց նրա խնդիրը լուրջ ուշադրութեամբ: Այդ բաւական չէ, Չահր Հայր Պօղոսին սեղանակից արաւ իրեն երեք անդամ և ընծաներ տուաւ նրան իւր թանկագին գոհարներից: Դրանք այնպիսի մեծ պատիւներ են, որոնց պարտկաց գահակալները, գոնէ մեր ժամանակներում, դեռ չեն արժանացրել ոչ որի: Բայց Հայր Պօղոսին արժանացրին: Որովհետեւ նա ձեռքին ունէր Սրբազան Պապի նամակը, նա ներկայացել էր Չահին իբրեւ նուիրակ այն մեծ ու վեհապանծ աթոռի, որի առաջ ծունկ են խոնարհում թագաւորները և որի փոշին համբուրում են աշխարհի հզօրագոյն իշխանները....

Վերջին խօսքերը Գերապայծառն արտասանեց հանդիսաւոր եղանակով և մի բանի վայրկեան լռելուց յետո՛ւ նորէն շարունակեց.

— Այո, ծանր է այն ազգի դրութիւնը, որին զօրավիգ չէ այսպիսի հզօր մի գահակալ և որի մեծաւորի կամ առաջնորդի վրայ ակնածութեամբ չեն նայում արդի բռնակալները: Ի՞նչ կարող է անել, օրինակ, Միքիսեղեկ կաթողիկոսը իւր ազգի համար... մի մարդ, որ իւր ան-

ձրն իսկ չկարողացաւ պաշտպանել Չահաբասի բռնութիւնից և որք մի ամբողջ ազգի գլուխ լինելով հանդերձ՝ բանտարկուած ու շղթայուած է այսօր իբրև հասարակ մի յանցաւոր...

— Ի՞նչ ես ուզում ասել զրանով, գերապայծառ հայր, ընդհատեց երէցը կարգապետին:

— Այն, թէ անհրաժեշտ է որ մարդիկ այսպիսի թշուառութեան օրերում, պաշտպան ունենան իրենց այնպիսի մի հզօր անձն, որպիսին է, օրինակ, սրբազան պապը: Տէր Անդրէասը ժպտաց:

— Դու չհաւանեցիր իմ խօսքին, հարցրեց կարգապետը հայեացքը սկեռելով քահանայի վրայ:

— Ընդհակառակը: Բայց կուզենայի իմանալ թէ ինչո՞ւ Սրբազան պապը չի պաշտպանում Արևելքի բոլոր բրիստոնեաներին՝ եթէ արդարև, այդքան զօրաւոր է նա:

Հայր Երազմոսի սիրտը թունդ ելաւ. նրան թուաց թէ՛ բաղդն արդէն մաքրում է իւր ճանապարհի արգելքները:

— Զօրաւոր. միթէ դու կասկածում ես նրա զօրութեան մասին, խօսել սկսաւ նա զուարթ ձայնով: Քահանայապետի զօրութեան ապացոյցը իւր նուիրակի փառաւոր ընդունելութիւնն է և աւելի ևս՝ այդ ընդունելութեան հետևանքը: Սրբազան պապը իւր նամակում առաջարկել էր Չահաբասին երեք խնդիր. ա) պարսկի փոխարէն՝ հայ ունիթօր կարգել վերատեսուչ այն գաւառների վրայ, ուր ապրում են վերջինները, բ) «Մանկաժողով» չ'անել Հռովմայ գահին հաւատարիմ բոլոր հայերի մէջ: գ) Վերադարձնել այն սրբազան սպասները, որ պարսիկները յափշտակել էին Երնջակայ և Ջահուկի մեր եկեղեցիներից: Չահաբասը այդ երեք խնդիրներն ևս կատարեց անմիջապէս: Բայց այդ՝ դեռ բոլորը չէ: Նա այնքան է սիրել հայր Զիտտա-

դինին, որ շարունակ պտտեցնում է հետը ուր որ գնում է. և այդ հանդամանքը օգնում է Սրբազան պապի նուիրակին հետզհետե նորանոր արտօնութիւններ ձեռք բերել: Այժմ ահա, օրինակ, մեր գիւղերից մի քանիսին «Թարխանութիւն» ¹⁾ է տուել Չահր, մի քանի աւաններ «խաս» ²⁾ է արել. իսկ շատ անձինքների պաշտօններ է յատկացրել Թէ բանակի մէջ եւ Թէ վարչական գործերում: Հայր Պօղոս Զիտտազինին յոյս ունի այսուհետև դեռ էլի նորանոր արտօնութիւններ ձեռք բերել: Այս ամենը, պատուարժան եղբայր, յաջողում է մեզ նրա համար, որ Չահր ցանկանում է հաճելի լինել Սրբազան պապին: Դու հարցնում ես Թէ՛ ինչո՞ւ, ուրեմն, Սուրբ Քահանայապետը, այդքան զօրաւոր լինելով՝ չէ պաշտպանում Արեւելի բոլոր քրիստոնեաներին. բայց չգիտես որ նա, ընդհակառակը, սաստիկ ցանկանում, ՚ի սրտէ փափաքում է ամենքին հովանաւորել և հէնց այդ իմաստով էլ նոր կոնդակ է զրկել ընդհանրական երեսփոխան Հայր Զիտտազինին: Իսկ վերջինս, պէտք է խոստովանել, աշխատում է այդ մասին գերազանց եռանդով: Քեզ օրինակ այս վերջին դէպքը: Հէնց որ Չահուլիս բէկը յայտնում է նրան «Մանկաժողովի» մասին, նա իսկոյն հրաւիրում է ինձ նախընտանից Երևան: — «Քրիստոսի հօտը, Դերապայծառ հայր, վտանգի մէջ է, շտապիր փրկել նրան... ասում է նա ինձ և իսկոյն էլ գործելու հրահանգներ տալիս: Այս հրահանգների մասին, խոստովանանք լինի մեր մէջ, նա խօսել է, նաև, Ամիր-գիւնէ նախարարի հետ և նրա հաճու-

1) Հարկից ազատել:

2) «խաս» էին կոչւում այն գիւղերն ու աւանները, որոնք արտօնութիւն ունէին հարկը ժողովել իրենց մէջ և տալ ուղղակի կառավարութեան, առանց հարկահանների կամայականութեան ենթարկուելու:

Թիւնը ստացել: Բացի այդ, Հայր Զիտտազինին տեսնուել է նաև կաթուղիկոսի հետ...:

— Ի՞նչ հրահանգներ են դրանք, հարցրեց Երէցը հետաքրքրութեամբ:

— Այն, որ ես շտապեմ Ագուլիս, յայտնեմ բոլորիդ դալիր վտանգը և ձեզ հետ միասին հոգամ նրա առաջն առնելու միջոցների մասին:

— Բայց ինչո՞ւ առաջին այցելութեանդ ժամանակ չը-յայտնեցիր ինձ այդ... հարցրեց Երէցը կասկածոտ մի հայեացք ձգելով Հայր Երազմոսի վրայ:

— Որովհետև դեռ չգիտէի թէ կյաջողի՞ մեզ այդ բա-րի գործը կատարել... կամ թէ դուք կօգնէք մեզ այդ բանում:

— Ի՞նչպէս թէ կօգնենք... մի՞թէ մենք մեր ժողո-վրդի թշնամի՞ն ենք:

— Ի՞նչ մեղքս ծածկեմ, տարակուսում էի, մանա-ւանդ որ ձեր կաթուղիկոսը, երևի տանջանքներ կրելուց անդգայացած, չէր կարողացել Հայր Զիտտազինիի տուած խորհուրդների իմաստը ըմբռնել և հետևապէս, օգտուել նրանցից: Բայց ես եկայ այստեղ, օրպէսզի խօսեմ ժողո-վրդի հետ և խորհրդակցեմ նրա սիրտն ու հոգին՝ ի մօտոյ ճանաչող հովիւների, այսինքն ձեզ հետ. յուսա-լով որ դուք աւելի խոհեմ և հեռատես կգտնուիք և չէք վարանիլ այսպիսի դէպքում զոհել փոքրիկ շահերը առա-ւել մեծագոյնը ձեռք բերելու համար:

— Փոքրիկ շահեր... ի՞նչ շահեր պիտի զոհենք, հար-ցրեց Երէցը աչքերը մեծ բանալով:

— Մնոտի, պարծանքի, ինքնասիրութեան և այլ նը-ման շահեր:

— Որո՞նք են դրանք:

— Այն, որ չէք հակառակի՞ եթէ Ագուլիսում մի քա-նի հարիւր տուն՝ հայ կոչուելու փոխարէն, Ունիթոր ա-

նունը կրեն:

— Բայց ինչու այդ անունը կրեն:

— Որպէսզի ազատուին իրենց որդեքը Չահի դուռը
դրկելու հարկից:

— Եւ ուրեմն այդ գնով մենք պիտի վայելենք Սըր-
բաղան պապի հովանաւորութիւնը, հարցրեց երէցը ժպտալով:

— Անշուշտ, ուրիշ կերպ անհնար է: Չահը խոստացել է «Մանկաժողով» չանել միայն և եթ պապական հօտի մէջ:

Եւ որպէսզի մենք «Մանկաժողովից» աղաքուենք, պիտի անպատճառ պապական դառնանք:

— Այդ է միակ ճանապարհը, յարեց կարգապետը:

Տէր Անդրէասը լռեց: Բայց իւր հայեացքը սևեռել էր հայր Երազմոսի վրայ:

Ի՞նչ կարդաց վերջինս այդ հայեացքի մէջ, գուշակել դժուար էր. բայց նա երևի զգաց իւր առաջարկութեան ստորացուցիչ լինելը, ուստի աւելացրեց.

— Մեր պահանջն այն չէ որ այդ մի քանի հարիւր տունը անպատճառ այսօր պապականութիւն ընդունին, չէ, այլ որ վկային Չահաբասի առաջ թէ՛ այն, իրենք պատկանում են մեր հօտին. իսկ դուք ձեր կողմից այդ վկայութիւնը հաստատէք:

— Այդպիսի առաջարկութեան պատասխանելն, մեր իրաւունքից վեր է. ասաց Տէր Անդրէասը, այդ հարցին կարող է լուծումն տալ միայն հոգևոր Տէրը:

— Իսկ եթէ նա մերժում է:

— Մենք ևս պիտի մերժենք...

— Բայց եթէ ժողովուրդը ցանկանայ հետևել մեր խորհրդին:

— Մենք կարգիլենք նրան այդպիսի քայլ անել:

— Դուք ուրեմն ժողովրդի թշնամին էք:

—Ո՛չ բարեկամը :

—Բայց ո՞րն է ապացոյցը.

—Այն, որ թոյլ չենք տալիս նրան մայրենի եկեղեցու ծոցից հեռանալ:

—Այստեղ եկեղեցու խնդիր չկայ, այլ միայն հոգիներ փրկելու... Ձեր առաջնորդն, ըստ երևութին, աւելի խելօք և հեռատես է. նա ոչ միայն համաձայնուեց իմ առաջարկութեան, այլ և շնորհակալ եղաւ այն խնամքի համար, որ ես տածեմ եմ դէպի իւր հօտը:

—Առաջնորդն համաձայնուեց, հարցրեց երէցը զարմանալով.

—Այո, և այն էլ ուրախութեամբ:

— Բայց ի՞նչ պայմանով:

Այն, որ քահանաները ևս միանան իւր հետ: Եւ նա, պէտք է ճշմարիտը խոստովանել, ամենից աւելի նշանակութիւն է տալիս քո խօսքին:

— Իմ խօսքի՞ն. ինչո՞ւ համար. չէ՞ որ քահանաների մէջ ես ամենից կրտսերն եմ:

—Այո. բայց նա ասաց թէ՛ ամենից մեծ հեղինակութիւն դու ես վայելում ժողովրդի մէջ և եթէ դու համակերպիս իմ առաջարկութեան, միւսներն անմուռնչ կհետեւին քեզ: Նոյնը կրկնեցին ինձ շատ ազդեցիկ Ագուլեցիներ, որոնց հետ այս մասին առիթ ունեցայ խօսելու: Ամենքն ասում են թէ՛ կընդունենք այդ առաջարկութիւնը, եթէ միայն Տէր-Անդրէասը միանայ մեզ հետ: Իսկ ես կարծում եմ թէ՛ դու այնքան հեռատես կլինիս, որ ՚ի չարը չես գործ դնիլ ժողովրդի դէպի բեզ ունեցած վրստահութիւնը և նրան կսիրես այնքան, որ նոյն իսկ իւր շահը պաշտպանելու համար, կընդունես իմ խորհուրդը՝ առանց վարանելու, զի փրկութեան միակ ճանապարհն այն է, որն ան առաջարկում եմ քեզ:

Երիտասարդ երէցը լուռ նայում էր կարգապետին

և կարծես, դժուարանում էր պատասխանել։ Առաջնորդն ու ժողովրդի մեծերը խնդրի վտանգաւոր կողմը տեսնել չկարողանալով, տուել էին իրենց համաձայնութիւնը։ Բայց ինքը գիտէր, տեսնում էր այն թակարդը, որ Ունիթօրների կարգապետը, հանգամանքներից օգտուելով, լարում էր հայ ժողովրդի համար, հետևապէս, եթէ համաձայնուէր նրա առաջարկութեան, կգործէր իւր խղճի և՛ պարտաւորութեան դէմ, դաւաճանելով ընդ նմին և իւր հօտի շահուն։ Իսկ թէ հակառակէր, կդրդուէր իւր դէմ Գարգապետի թշնամութիւնը, որով և, գուցէ, կորուստ պատճառէր մի քանի տասնեակ մանուկների։ Վերջին հանգամանքը կշարժէր իւր դէմ նաև առաջնորդի և իւր կարգակիցների զայրոյթը, որոնք և իրենց կողմից ժողովրդին կկանգնեցնէին իւր դէմ։

Այս մտածութիւնները երկար պիտի զբաղեցնէին Տէր-Անդրէասին, եթէ հայր Երազմոսը լռութիւնը չընդհատէր։

— Հա՛, ի՛նչ ես որոշում։ Համաձայնում ես թէ ոչ։ Գարգապետի ձայնը ցնցեց քահանային և նա գլուխը բարձրացնելով վճռաբար պատասխանեց։

— Ոչ։

— Այդ պատասխանը չէի սպասում, ասաց կարգապետը։

— Ուրիշ պատասխան չէի կարող տալ, յարեց երէցը։ Քանի որ առաջնորդը իմ համաձայնութեան է սպասում, քանի որ ժողովուրդը իմ ընտրութեանն է հաւատում, ես ՚ի չար չեմ գործ դնիլ ոչ մէկի և ոչ միւսի հաւատարմութիւնը։

— Բայց նրանք համաձայնուել են, ընդհատեց հայր Երազմոսը։

— Նրանք խնդրի մի երեսն են նայել։ Իսկ միւսը՝ ինձ են թողել նայելու։

— Եւ դու ի՞նչ ես գտնում այդ երեսի վրայ:

— Այն, որ տեսնում եմ թէ՛ քո առաջարկած խորհրդին հետեւելով իմ ժողովուրդը կստանայ միայն խաբուսիկ և ժամանակաւոր օգուտ. մինչդեռ կրած վնասը կլինի յաւիտենական:

— Ինչո՞ւ այդպէս ես կարծում, հայր Անդրէաս. հարցրեց կարգապետը:

— Որովհետեւ դու առաջարկում ես իմ առաջնորդին, կարգակիցներին և ժողովրդին՝ որ նրանք Չահաբասի առաջ վկայեն թէ՛ այսքան հարիւր տուն պատկանում են քո հօտին: Բարի: Դիցուք թէ վկայեցին: Այդ մի քանի հարիւր տան մէջ գտնուող մի քանի տասնեակ գեղեցիկները, հարկաւ, կաղատուին Չահի ձեռքից. բայց ի՞նչ կհետևի դրան. այն՝ որ մի քանի տասնեակ մանուկների պատճառով մենք կկորցնենք մի քանի հարիւր ընտանիք և կըկորցնենք անդառնալի կերպով:

— Ի՞նչպէս թէ կկորցնէք, հարցրեց կարգապետը, իբր թէ երէցին չհասկանալով:

— Այդ մի քանի հարիւր ընտանիքը կը դառնան պապական, պատասխանեց երէցը: Դուք հօ թոյլ չէք տալ որ հրապարակաւ և Չահի ներկայութեամբ Ունիթոր հռչակուած հայերը մէկ էլ նորէն իրենց եկեղեցու դիրկը դառնան: Նոյն իսկ բռնի ուժով, ֆարրաշների օգնութեամբ դուք այդ կարգիւէք նրանց. և ոչ մէկը դրանցից չի համարձակուիլ յայտնել թէ ինքը Չահի առաջ սուտ վկայութիւն է տուել. այդպիսի յանցանքի համար կախաղան կհանեն նրան:

— Էհ, թող չդառնան. մի՞թէ պապական մնալով նրանք կկորչեն:

— Իմ խորին համոզմունքով՝ պապական եկեղեցուն յարող հայը ընդ միշտ կորչում է իւր ազգի համար:

Կարգապետը տեսաւ որ երիտասարդ երէցը թա-

փանցել է արդէն իւր գաղտնիքները խորքը և որ ինքը նրան էլ չի պիտի կարենայ համոզել, ուստի աւելորդ համարելով շարունակել զրոյցը, վեր կացաւ տեղից:

— Ես կամեցայ մի բարիք գործել քո ազգի համար, ասաց նա երէցին, դէպի դուռն ուղղուելով. բայց դու արդեւ եղար ինձ: Դա մի չարիք, մի յանցանք էր, որ գործեցիր: Չհաբասի նման հզօր թագաւորը ստորում է Սրբազան Պապի բարեկամութիւնը, հայերը չպէտք է մերժէին այն: Այդ անխոհեմութեան հետեանքը կծանրանայ, անշուշտ, քո ազգի վրայ և այն ժամանակ մարդիկ կանխեն քեզ, որ աշխարհային հաշիւների պատճառով արդեւ եղար դու բաղմամբիւ հողիների փրկութեան:

— Այդ հոգիները, Գերապայծառ Հայր, կփրկուին մեր ձեռքով: Հայոց եկեղեցին, այն, չունի հզօր վահապետ. միակ կաթողիկոսը կալանաւոր է և բանտարկեալ. բայց այդ եկեղեցին ունի դեռ արի զինուորներ, որոնք կդիմադրեն սպառնացող վտանգին. կիւռուեն բաջաբար, և եթէ հարկ կլինի, կմեռնեն անարտօն՝ եթէ չարիքը կգորանայ. ինչ վերաբերում է անէծքին, ես նրանից չեմ վախենում, քանի որ համոզուած եմ թէ՛ արդար գործ եմ կատարում: Այն, կգտնուին մարդիկ, որոնք կանխեն ինձ այսօր. բայց նրանց որդիքը կօրհնեն ինձ ապագայում:

— «Արիւն ձեր 'ի գլուխ ձեր» ասաց կարդապետը և առանց ետել նայելու դուրս դնաց սենեակից:



Աւանի մէջ շուտով տարածուեցան զանազան լուրեր թէ Ժողովի մասին, որ տեղի էր ունեցել առաջնորդարանում և թէ այն առաջարկութեան, որ Ունիթօրների կարգապետը արել էր Տէր Անդրէասին: Այդ պատճառով

Ժողովուրդը, որ Ջահի գալստեան առթիւ արդէն վարան-
 ման մէջ էր, այժմ էլ սկսաւ յուզուիլ ներքին երկպառա-
 կութիւնից։ Զուկայի մէջ, հրապարակում և եկեղեցիներ-
 րի բակերում խօսում, դատում և վիճում էին այդ խն-
 դիրների մասին։ Մարդիկ բաժանուել էին մի քանի կու-
 սակցութեան։ Դրանցից մինը պաշտպանում էր առաջ-
 նորդին և պահանջում՝ որ յետ դարձնեն թագցրած երե-
 խաներին և նրանց հետ միասին դիմաւորելով Ջահին՝ ի-
 րենց յոյսը դնեն նրա մեծանձնութեան վրայ։ Այսինքն,
 «մանկաժողովն» արդեւելու համար՝ փոխանակ անձնիշխա-
 նաբար գործելու՝ խոնարհին շահի առաջ և նրա գթու-
 թիւնը հայցեն։ Հակառակ դէպքում, ասում էին նրանք,
 Ջահը իմանալով որ գեղեցիկներին թագցրել ենք, կղայ-
 րանայ և աւելի մեծ չարիք կհասցնէ ժողովուրդին։ Երկ-
 րորդ կուսակցութիւնը, որ թէպէտ փոքրաթիւ, բայց
 կազմուած էր գեղեցիկ զաւակների տէր հարուստ ծնող-
 ներից, պահանջում էր որ ընդունուի հայր Երազմոսի ա-
 ռաջարկութիւնը և ցանկացողները Ունիթորների թուով
 գրուելով՝ հաշուին ու վկայուին հայ հոգևորականութիւ-
 նից իբր պապական եկեղեցուն պատկանողներ։ Երրորդ
 և աւելի զօրեղ կուսակցութիւնը, որ բաղկացած էր հոգ-
 ւով ու սրտով հայ մարդիկներից, երիտասարդներից և
 քաջ հոգևորականներից, պաշտպանում էր Տէր-Անդրէասին
 և պահանջում՝ որ ամենքն հետևեն նրա խորհրդին և կա-
 տարեն այն՝ ինչ որ նա բարւոք և անհրաժեշտ է համա-
 րում, որովհետև իրենք մեծ հաւատ ունէին այդ մարդու
 խելքի և հայրենասիրութեան վրայ։ Նրանք պաշտպանում
 էին տէր-հօր այն միտքը թէ՝ չպէտք է կուրօրէն հնա-
 զանդել Ջահի կամ նրա կառավարիչների ամեն մի անի-
 րաւ հրամանին։ Այլ թէ երբեմն պէտք է, նաև, ընդդիմա-
 նալ՝ ցոյց տալու համար թէ՝ արդարև ժողովուրդը կազ-
 մուած է կենսական և զգացող մարմիններից և ոչ թէ

գիւակներէից, որոնց կարելի լինի գլորել ուր էլ որ կամինան: Կար և անտարբերների, կամ արքայական հաճութիւնը որոնող պաշտօնեաների մի խումբ, որ պնդում էր թէ՛ պէտք է ամեն բան անել, ամեն ինչ զոհել միայն և եթ Չահի ընդունելութիւնը փառաւոր կացուցանելու համար. և այդ նկատմամբ առաջարկում էր հետևել միայն մարմնաւոր իշխանութեան ներկայացուցչի, այն է՝ Ադուլեաց վէքիլի հրամաններին և մատակարարել նրան այն ամենը, ինչ որ նա անհրաժեշտ է համարում ունենալ՝ Չահնշահի ընդունելութիւնը փառաւորազոյն կացուցանելու համար:

Հայոց կտրմից լինելիք ընդունելութեան պատրաստութիւնը վէքիլը յանձնել էր այս վերջին կարգի պաշտօնեաներին, որոնք և արիւն-քրտինք մտած՝ մեծ աշխատութիւնների մէջ էին: Դրանցից ոմանք զարդարել էին տալիս տներն ու պատշգամները, ոմանք քաղաքը լուսաւորելու կարիքն էին հոգում. ուրիշները հրավառութիւններ պատրաստելու ետևից էին. ռազմական կարգերին ծանօթ եղողները Չահին դիմաւորող խմբերն էին կադմակերպում, իսկ աւելի կիրթ ճաշակ ունեցողները՝ կարգաւորում էին երգչուհիների, կաքաւողների և, ընդհանրապէս, գեղեցկուհիների խմբակներն, լնտրելով այդպիսիներին ոչ միայն ամուսնացեալ կանանցից ու հարսնացու աղջկերանցից՝ (որքան որ կարողանում էին գտնել) այլ և կուսանոցներից բերած միանձնուհիներից: Սոյն կարգադրիչներն էին, որոնք և վէքիլի անունով հրաման ղրկեցին տէր-Անդրէասին, որ նա նշանակած օրն ու ժամին պատրաստ գտնուի Որտուատում իւր բոլոր աշակերտներով: Վերջիններս հարուստ ու ծաղկեայ չապիկներ հագած՝ պէտք է հետևէին եկեղեցական թափօրին, որը կազմելու էր առաջնորդը և իրենց քաղցր երգերով Չահի լսելիքը զուարճացնէին:

Այս հրամանի վրայ աշակերտների ծնողները թափուկեցան դպրատուն և լաց ու կոծով խնդրում էին տէր-Անդրէասին՝ մի ճար անել իրենց զաւակները Չահի առաջ չհանելու համար:

Երէցը ծանօթացրեց նրանց գործի դրութեան հետ և ցաւելով յայտնեց, որ այլ ևս չի կարող օգնել իրենց այդ գործում, որովհետև իւր ծրագիրները վերջնականապէս խանդարուել էին կարգադրիչների այդ նոր հրամանով: Բայց նա խորհուրդ տուաւ նրանց դիմել առաջնորդին, ասելով թէ՛ դուցէ նա, իբրև հոգևոր հովիւ, ձեռնհաս լինի գտնել մի պատճառաւ աշակերտներին Որտուտաւ չտանելու համար: Երէցը, որ ժողովի օրը այնքան խստութեամբ յանդիմանում էր առաջնորդին և այժմ իսկ ամեն անյաջողութեան պատճառ նրան էր համարում, մի բառով անգամ տրտունջ չըլայտնեց նրա դէմ, չկամենալով ծնողների առաջ նուաստացնել իւր իշխանաւորին: Այս պատճառով ծնողները, թէպէտ և ամեն բանի տեղեակ՝ այսուամենայնիւ, լսեցին տէր-հօրը և գնացին առաջնորդի մօտ:

— «Աման, հայր սուրբ, հրամայիր կոտորել մեր երեխաներին միայն թէ նրանց հոգիները դժողբից ազատի», այս խօսքերով դիմեցին նրանք վարդապետին. և չէին կեղծում: Արդարև, նրանք աւելի հեշտութեամբ իրենց որդւոց մահը կտեսնէին՝ բան թէ նրանց Չահի դուռը տանելն ու թուրքացնելը:

Առաջնորդը ծնողների յուսահատութիւնը տեսնելով, նոր հասկացաւ թէ՛ ինչո՞ւ տէր-Անդրէասը իւր բոլոր ուշադրութիւնը դարձրել էր միայն այդ խնդրի վրայ և շատ զղջացաւ, որ իւր անխորհուրդ ժողովով ու ավմուկով բանը մեծացրել և երէցի գործին արգելք էր դարձել: Բայց որովհետև սխալն արդէն արուած էր և այն ուղղելու ոչ մի հնար չկար, ուստի վարդապետին ոչինչ

չէր մնում անել եթէ ոչ խորհուրդ տալ ծնողներին՝ դնել իրենց յոյսը Աստուծոյ ողորմութեան վրայ: — «Նա, որ Իսրայէլի երեք որդիները ազատեց Նաբուգոդոնոսորի վառել տուած հնոցից, անշուշտ, ձեր պաւակներն էլ կազատէ չարիքից» ասաց նա ծնողներին:

Բայց վերջիններին այդքանը չգոհացրեց: Երկար ու բարակ այս մասին խօսելուց յետ, ծնողներից մինը, որ արհեստով վարսավիրայ էր, ասաց.

— Հայր սուրբ, եթէ քեզ չլսենք և մեր որդիները չուղարկենք Որտուտտ, նրանց, մի և նոյն է, զօրով դուրս կրաշնն տանից. այդ հաստատ գիտենք: Ուրեմն ուզենք, չուզենք պիտի ղրկենք: Բայց ի՞նչ կասէիր դու, օրինակ, եթէ մենք նրանց տգեղացնէինք և այնպէս ուղարկէինք:

— Տգեղացնէիր... ի՞նչպէս, հարցրեց առաջնորդը:

— Այնպէս, ինչպէս որ կարող ենք, կամ հնարաւոր կլինի:

— Եթէ կարողանաք տգեղացնել այնպէս՝ որ չերևայ թէ արհեստական կերպով էք տգեղացրել, ինչու չէ, կարելի է, համաձայնուեց առաջնորդը:

— Նս այնպէս կանեմ, որ արհեստական չի երևալ:

— Բայց ի՞նչ կանես, հարցրեց մի ուրիշը:

— Նախ կսափրեմ երեխայի գլուխը. այդպիսով նրա գեղեցկութեան մի մասը կկորչի: Ապա գիտեմ մի դեղ, որը մորթի վրայ քսելուց՝ նրան կարմրացնում և վրան գոնջի պէս վէրք է գոյացնում: Այդ դեղը կքսեմ և երեխայի գլուխը գոնջոտուած (քէշալ) կերևայ:

— Բայց մի՞թէ դա մնաս չի պատճառիլ երեխային, հարցրեց ծնողներից մինը:

— Ոչ մի մնաս. կամեցած ժամանակդ կարող ես վէրքը բուժել մի հասարակ օժանելիքով:

— Եթէ այդպէս է, մենք ամենքս կարող ենք գոր-

ծաղրել այդ միջոցը, խօսեցին այս ու այն կողմից.

— Եւ դա այն առաւելութիւնն ունի, յարեց վարսավիրան, որ ամենքին կարծել կտայ թէ՛ երեխաները վարակուած են գոնջով. իսկ այդ հիւանդութիւնը, ինչպէս զիտէք, սաստիկ տարածուող է և, մանաւանդ, ատելի պարսիկներին. թէպէտ հենց նրանք են որ մեծ մասամբ վարակուած են այդ ակտով:

Ծնողները բանաւոր գտին վարսավիրայի առաջարկութիւնը և առ այդ վարդապետի համաձայնութիւնն առնելով՝ իրենց տները ցրուեցան:

Երկու օրից յետ, այն է՝ Որտուատ ուղևորուելու համար նշանակած ժամին Խցաձորի դպրատունը հաւաքուեցան տէր-Անդրէասի աշակերտները, բոլորն էլ սափրած գլուխներով և նրանցից գեղեցիկները՝ վարակուած արհեստական գոնջով:

Տէր Անդրէասը առաջին անգամ տեսնելով աշակերտներին այդպէս այլանդակուած, զարմացաւ, որովհետեւ ինքը դեռ անտեղեակ էր ծնողների որոշման. բայց երբ հասու եղաւ իրողութեանը՝ շատ վշտացաւ, որովհետեւ կատարուած գործը, ըստ իւր կարծեաց, կարի անխորհուրդ էր: Աշակերտների արտաքին տգեղութիւնը այնպէս էր աչքի ընկնում, որ նրա արհեստական լինելը անկարելի էր ծածկել Չահաբասի սուր տեսութիւնից:

Բայց այլ ևս ուշ էր. սխալն անկարելի էր ուղղել: Մնում էր որ տէր-հայրը հնազանդուելով հայ տնօրէնների հրամանին՝ պատրաստէր իւր աշակերտները և միանալով հոգևորականների խմբին՝ ուղղուէր Որտուատ:

Այդպէս էլ արաւ նա:

ԺԱ.

Չնայելով որ Որտուաւոր հարուստ այգիներն ու պարտէզները զրկուած էին իրենց կանաչազեղ զարդերից և ձիւնը ծածկել էր ոչ միայն աւանի ետեւից բարձրացող լեռնալանջերը, այլ և Որտուաւորն ու նրա շրջակայները, այսու ամենայնիւ պայծառ արևը, որ յուշիկ բարձրանում էր Ալանգէօղի ետեւից, մի առանձին կենդանութիւն էր տուել թէ կանաչադուրկ այգեստանին և թէ նրա առապարուտ շրջականերին: Դիւղաքաղաքը, որ արդէն անսովոր շարժման մէջ էր, գեղեցիկ եղանակի շնորհիւ, աւելի ուրախ կերպարանք առաւ: Փողոցներում դեռում էր ամբողջ. ֆարրաշները պտտում էին խմբերով, իսկ ֆարրաշ-բաշխները հրամաններ էին տալիս, որոնք կատարւում էին արագ ու ճշտութեամբ: Դրանցից շատը կայանում էր նրանում՝ որ հայհոյանքով ու հարուածներով հալածում էին խուժանը մի փողոցից դէպի միւսը, կամ անցքերը մաքրում խոնուած ժողովրդից: Այդ ճնշումներից ազատ էին մնում կտուրների վրայ հաւաքուած հանգիստեանները, տղամարդիկ թէ կանայք, որոնք հետաքրքրութեամբ սպասում էին Ջահի գալստեան: Դրանցից առաջինները խոնուած էին տանիքների բաշերի վրայ, իսկ վերջինները՝ նրանց ետևում, ծածկուած սպիտակ շղարշատեղերով և ապաւինած, կարծես, տղամարդկանց պաշտպանութեան: Փողոցներից անցնող ֆարրաշները դիտում էին այդ ծածկուող դէմքերը վայրենի հայեացքով և, կարծես, դայրանում, որ չեն կարողանում բարձրանալ դէպի վեր և յափշտակել նրանց պաշտպանների ձեռքից: Սակայն ժողովուրդը ապահով էր այդ օրը ամեն օրերից աւելի, որովհետև Ջահի գալուստը ամեն շարագործական եռանդ զուպել ու սառեցրել էր:

Ագուլիսի վէրիլը, որ անձամբ հսկում էր տեղի ու-

Նեցող պատրաստութեանց վրայ, այդ միջոցին գտնուում էր աւանից դուրս: Որտուաւոր կարգապահութիւնը յանձնելով իւր վերակացուներին, նա իջել էր դէպի Երասխը ձգուող մեծ հարթավայրը, ուր ժողովուած էր արդէն աշխարհաստումը բաղմութիւն: Սյդտեղ գտնուում էին Սիսականի այն բոլոր ընտրեալները, որոնք պիտի դիմաւորէին Ջահին առանձնապէս: Մէլիքներ, ազնուականներ, դատաւորներ, խօջաններ, ամեն մէկը իւր սեպհական մարդիկներով և աւագութեան կարգով՝ բռնած էին մի որոշ տեղ: Դրանց հետեւում էին պարսիկ կրօնաւորներն, իրենց կրօնապետով և հայ ու կաթողիկ հոգեւորականներն՝ իրենց առաջնորդներով, երգեցիկներով և եկեղեցական հարուստ սպասաւորութեամբ: Դրանց հետ էին, նա և, Սիւնեաց կուսանոցներից եկած միանձնուհիները, ալ և, տէր Անդրէասի աշակերտները, որոնք, հայ տնօրէնների կարգադրութեամբ, հագած էին ծաղկեայ հարուստ շապիւրներ և ձեռքերին բռնած դեղնամոմի ճրագներ: Աշակերտներից յետոյ գալիս էին գեղեցիկ պատանիների և երիտասարդուհիների խմբերը՝ շքեղապէս զարդարուած: Ապա գուսանական պարերը (խումբ), կաղմուած ամենաընտիր գեղեցկուհիներից:

Այս առաջին ու ընտրեալ խմբերին յաջորդում էին արհեստաւորների դասակարգերը՝ իրենց բազմազան ու գոյնզգոյն դրօշակներով. ապա Սիսականում գտնուող զօրքերը և վերջն՝ ամբոխասաստ մի բաղմութիւն, որ գրաւած ունէր ոչ միայն հարթավայրի տարածութիւնը, այլ և մերձակայ բլուրներն ու կարաւանի ընդարձակ ճանապարհը:

Վէրջին աշխոյժ նժոյգի վրայ նստած և ֆարրաշները ետեից ձգած՝ անընդհատ անցուղարձ էր անում բաղմութեան միջով, հրամաններ էր տալիս վերակացուներին և երբեմն էլ քաղցրութեամբ ու ժպտադէմ խօ-

սում էր մէլիքներէ, բէկերի և հոգևոր առաջնորդների հետ, սպասելով բոլոր ժամանակ թէ երբ կերևայ առաջին սուրհանդակը, որ պիտի աւետէր Չահի գալուստը:

Եւ ահա կէսաւուր մօտ, Ջուղայի ճանապարհով արշաւասոյր ընթացող մի ձիաւոր՝ ձեռքին բռնած դրօշը ծածանելով՝ յայտնեց ամենքին Չահի մերձենալը: Իսկոյն ամբոխի մէջ բրդեց մի շշուկ, ժողովուրդը տեղից խլըրտեցաւ և խումբերը սկսաւ տատանիլ ինչպէս ալեկոծուած թեան մօտեցող ծովի կոհակներ: Փողերն ու թմբուկները որոտացին և նրանց արձագանքը սկսաւ մերձակայ ձորերն ու լեռները թնդացնել:

Շուտով երևաց Չահին ուղեկցող հեծեալների գունդը, որ արշաւասոյր դիմում էր դէպի Որտուատ. ապա արքայական ասպախումբը, որի առաջին հեծեալը ինքը հզօր Չահարասն էր, նստած ահլաբարանոց նժոյգի վրայ: Նրան հետևում էին իւր մերձաւոր իշխաններն ու գլխաւոր զօրապետները, որոց գեղեցիկ զէն ու զարդը փալփլում էր հեռուից իբրև ոսկեղէն միապաղաղ զանգուած: Դրանցից յետոյ գալիս էր Չահի հարէմը, զետեղուած զանազան պատգարակներում, որոնք ծածկուած էին թանձր քօղերով ու վարագոյրներով և բարձուած զոյգ զոյգ ջորիների վրայ: Սևամորթ ներքինապետը, իւր զրահաւորուած ներքինիներով՝ հսկում էր այդ անմատոյց սըրբարանին: Իսկ դրանց բոլորին հետևում էին վերջապահ հեծելախմբերը:

Հասնելով հարթավայրին՝ Չահը ողջունեց իրեն ընդառաջող բազմամբոխ ժողովրդեան, որը լուռ և խոնարհ երկրպագում էր իրեն. ապա արշաւասոյր ընթացքով ուղղուեցաւ Որտուատ, ուր փոքր միջոց հանգստանալով՝ ապա պիտի ճամպուէր Ագուլիս:

Բիւրաւոր աչքեր այդ վայրկենին իրենց տեսութիւնը լարել էին ահաւոր Չահարասին տեսնելու համար:

Տների կտուրներից, պատուհաններից և փողոցների բարձրավայրերից նայում էին նրան երկիւղով և հիացմամբ։ Եւ տիրապետն, այդ վայրկենին արժանի էր արդարև, իւր համբաւին։ Նա նստած էր արաբական աղնուարին նէջէղձի վրայ, որի ասպաղէնը ծածկուած էր ոսկեծոյլ ու յակնթակապ զարդերով։ Նժոյգի բարձր ու սէգ հասակին՝ քաջ համապատասխանում էր հեծեալի յաղթանդամ և րաջալանջ իրանը, հպարտ բայց կարճավիզ գլխով, խոշոր և գիրուկ դէմքով, հարուստ ու առատ ընչացքներով, որոնք անուրր ցրուած էին ամիլած ծնօտների վրայ և մեծ մեծ ու գեղեցիկ աչքերով, որոնք նայում էին իւր շուրջը սուր և թափանցող հայեացքով և կարծես սպառնում՝ որ ոչ մի մահկանացու՝ հարուստ լինի նա թէ աղքատ, արդար թէ յանցաւոր։ Համարձակուի թագչի իւր արքայական տեսութիւնից։ Նա հագած էր հնդկական նրբագործ խլայ, որի օձիքն ու կուրծքը բանուած էին ոսկով, մարդարտով և մեծագին գոհարներով։ Կապած էր ոսկեհուն և յակնթակապ գօտի, որից բարշ էր ընկած Դամասկեան կէռ սուրը՝ համակ ոսկեպատ և ականակուռ։ Գլխին ունէր արքայական խոյր, որին հովանաւորում էին թանձր ցցունքներ։ Խոյրի ճակատը զարդարուած էր գոյնգգոյն քարերով, իսկ նրա ձախ կողմի վրայ փայլում էր շողալնեայ մի մեծ աստղ, որի մէջ ցցուած էր արքայական ջղան։ Չահի հարուստ զարդարանքները լրացնում էին նրա երկու գլինդերը, խոշորոր ձուած և յակնթներից, որոնք փայլում էին նրա ականջների վրայ՝ իբրև զոյգ հրավառ աստղեր։

Անցնելով Որտուատի կամուրջը, նա ուղղուեցաւ դէպի մեծ հրապարակը, որի վրայ կառուցած էր նախկին տիրապետ Ղասաբ Հաջիի չքեղ ապարանքը, որ տասն և չորս տարիներից, այն է՝ Ղասաբ Հաջիի օսմանցիներից գերուելուց ի վեր՝ գտնուում էր տխուր և անփառունակ

յրութեան մէջ։ Այդ օրը, սակայն, այդ ապարանքն զգեցել էր իւր նախկին պերճութիւնը։ Նրան զարդարել էին թաւշով ու կերպասով, յատուկների վրայ փռել մեծագին գորգեր, փէնջարանները զարդարել վարագոյրներով, իսկ սանդուխներից սկսած մինչև հրապարակի դուռը տարածել էին կարմիր փրանդազ, որի վրայով պիտի անցնէր երկրի տիրապետը։ Ապարանքի գլխաւոր դահլճի մէջ, որ զարդարուած էր ոսկեկար օթոցներով և փղսկրեայ կահերով յու կարասիներով բացուած էր համադամ նախաճաշի սեղան։ Այդտեղ պատրաստ կեցած էին, նաև, երգիչ գուսաններ և ընտիր պեղեցկուհիների մի խումբ, որ պերճօրէն հագնուած, կիսամերկ կրծքով ու հոլանի թևերով պիտի սպասաւորէր շահին՝ մատուցանելով նրան անոյշ խորտիկներ, ագնիւ գինի, ընտիր պտուղներ և քաղցրահոյզ օշարակ։

Սիսականցւոց ընդունելութիւնը հաճելի տպաւորութիւն էր արել Ջահի վրայ։ Գայդ պատճառով նա իւր օթեանը մտաւ ուրախ տրամադրութեան մէջ և սիրալիր կերպով ողջունեց հանդիսապետներին։ Երբ նրա շուրջը խմբուեցան իւր աւագներն ու իշխանները, նա հրամայեց ներս հրաւիրել նաև հայոց գլխաւորներին, այն է՝ մէլիքներին, ազնուականներին և նրանց հոգևոր առաջնորդներին, ի թիւս որոց և ունիթորների կարգապետին և պապի նուիրակին։ Ըստ իւր հաճոյախօս բնաւորութեան, Ջահն ամենքին ուղջունելով՝ արժանի արաւ նրանց, նաև, մի քանի քարհաճ հարցերի, որից յետոյ և հրաւիրեց ամենքին՝ նախաճաշ վայելել իւր հետ միասին։

Այդպէս նա անում էր յաճախ. չնայելով որ իւր պարօրիկ իշխանների համար մեծագոյն մի նախատինք էր՝ նստել քրիստոնեաների հետ միասին և ճաշել միևնոյն սեղանի վրայ։ Բայց որովհետև հրամայողը հզօր Ջահ-աբասն էր, ուստի ոչ մի շրթունք չէր համարձակուում

տրտունջ չնշալ նրա դէմ: Նոյն խոսքը պարսիկ կրօնապետը կատարում էր, այդ հրամանը կուրօրէն, որովհետև համոզուած էր, որ հակառակ դէպքում կկապեն իրեն ձիու պոչին:

Բայց Չահլի իւրաքանչիւր այդպիսի արարքը կապ ունէր մի նենգ և, շատ անգամ, անարդ դիտաւորութեան հետ: Յաճախ նա պատուում կամ բարձրացնում էր մարդուն միայն նրա համար, որ նորէն նուաստացնելով՝ աւելի ևս զգալ տայ նրան իւր անկման նախատինքը: Բազմեցնելով իւր սեղանի վրայ հայոց գլխաստրներին՝ նա, միևնոյն ժամանակ, առանձին հրամայել էր՝ ներս բերել նաև հայոց կաթողիկոսին, որին շղթայակապ հասցրել էին Որտուտա՝ այդտեղից Ագուլիս և անտից Պարսկաստան տանելու համար: Գուսանական երգերով և դինարբուլթեամբ համեմուած հացկերոյթի միջոցին՝ յանկարծ հնչեցին դահլիճում կալանաւորի շղթաները: Բոլորը յետ նայեցան: Պարսիկ իշխաններին տիրեց մեծ հրճուանք. հաճութեան ժպիտ խաղաց, նաև, Ունիթօրներէ կարգապետ Հայր Երազմոսի և պապի նուիրակ Զիտտագինիի դէմքերին, մինչդեռ հայ աւագները՝ կարծես շանթահար եղան. նրանց դէմքերը այլապունեցան և քիմքերը դառնացին...: Նրանց առաջ կանգնած էր Մելրիսեղեկ կաթողիկոսը՝ ճնշուած և նուաստացած, նիհար ու թալկադէմ: Աղքատիկ մի քուրձ հազիւ էր պաշտպանում նրա մարմինը ձմրան ցրտութիւնից և դեղնած վեղարը ծառայում էր իրեն ոչ իբր գլխանոց՝ այլ իբրև ծածկոյթ իւր դէմքին, որի վրայ նկարուած էր այնքան վիշտ ու տառապանք:

— Մյոսպիսի մի ուրախութեան օր, երբ հայ իշխաններդ վայելում էք ինձ սեղանակից լինելու բաղդաւորութիւնը, ես կամեցայ մի ուրիշ հաճոյք էլ պատճառել ձեզ, խօսել սկսաւ Չահլը կեղծաւորաբար. — գիտեմ որ դուք

սիրում էր ձեր խալիֆին, ուստի նրան իրան զրկելուց առաջ, (որտեղից այլ ես նա չի դառնալու), կամեցայ որ վերջին անգամ իւր տեսութիւնը վայելէր:

—Թող Աստուած երկար կեանք պարգևէ Ձահին, որ այդքան առատօրէն թափում է մեզ վրայ իւր ողորմածութեան պարգևները, պատասխանեց հայոց առաջնորդը՝ խոնարհելով մինչև գետին:

Այդ պատասխանը թէպէտ միամտաբար տրուեցաւ, բայց նա աղդեց խորագէտ Ձահի վրայ, որովհետեւ զգալ տուաւ նրան՝ թէ հայ առաջնորդի բարեմաղթութիւնը նոյն արժէքն ունի իւր համար, ինչ որ իւր «պարգևները» հայ ազգի համար:

Բայց ինչո՞ւ արդեօք Ձահը բերաւ կաթուղիկոսին այդտեղ. ինչ նպատակի էր ծառայում նրա այդ վայրենի զուարճութիւնը:

Առաջին նպատակն այն էր՝ որ հայ իշխանները տեսնելով իրենց պետին այդ նուաստ դրութեան մէջ, ամաչեն, նամուսի դան, և Ձահին տալիք նուէրների հետ միասին վճարեն, նաև, կաթուղիկոսի, կամ որ նոյն է, էջմիածնական աթոռի պարտքը, (որը դեռ օսմանցիների տիրապետութեան ժամանակից յանիրաւի գրուած էր սուրբ Աթոռի վրայ). երկրորդ՝ կամենում էր հաճոյք պատճառել պապի նուիրակին՝ գիտնալով նրա հակառակութիւնը հայոց եկեղեցու հետ, և դրանով նրան պարտաւորեցնել՝ ծառայել իւր կամքին ուրիշ դէպքերում: Երրորդ՝ այդպիսով ամօքում էր Ձահը իւր հաւատարմների սիրտը, միևնոյն ժամանակ հասկացնելով նրանց թէ՛ իւր համար միայն վայրկեանի գործ է՝ գլորել մէկին ամենաբարձր աստիճանից մինչև ստորագոյնը, եթէ նա կը յանդգնի անհաճոյ լինել իրեն որ և է մի բանով:

Կաթուղիկոսը կանգնած մնաց դահլիճում մինչև նախաճաշի վերջը, որից յետոյ զինուորները վերադարձրին

Նրան իւր արգելանոցը՝ Ոչ որ հայերից չհամարձակուեցաւ նոյն իսկ ամենաթոյլ դժգոհութեան մի ցոյց արտայայտել Ջահի դէմ։ Միայն Անդրէաս երէցը, որ իւր աշակերտները հետ միասին կանգնած էր դրսի սրահում և ի պատիւ Ջահի երգել էր տալիս նրանց, տեսնելով կաթողիկոսին շղթայակալ, իսկոյն յուզուեցաւ և ծռնկ չոգելով նրա առաջ՝ աջը համբուրեց։ Նոյնն անել տուաւ նա և իւր աշակերտներին։ Բացի այդ, բոլոր ժամանակ որ կաթողիկոսը գտնուում էր դահլիճում, նա թոյլ չտուաւ որ իւր աշակերտները երգեն։ Այս հանգամանքը, բարեբաղդաբար, աննկատելի մնաց Ջահի և դահլիճում գլըտնուող մեծամեծների համար, որովհետև դուստնական երգերը աւելի էին գրաւում նրանց, քան հայ աշակերտների մեղեդիները։

Քիչ ժամանակից յետոյ հանդիսապետները դուրս եկան դահլիճ՝ արքային ուղեկցող գնացքը կարգաւորելու։

Այժմ ամենից առաջ պիտի ընթանար հայ հոգևորականութիւնը, կաղմելով շքեղ եկեղեցական թափօր, կրելով ձեռքին նուիրական սպասներ և շարունակ երգելով ու խնկարկելով։ Նրան պիտի հետևէին հայ միանձնուհիները, իրենց առանձին երգչուհիներով։ Ապա Տէր Անդրէասը՝ իւր աշակերտական խմբով։ Սրանցից յետոյ պիտի գային Պարսիկ հոգևորականները, ազնուականները, ժողովրդեան աւագները, ապա գեղեցիկների և գեղեցկուհիների խմբերը, գուսաններն ու կայթողները, վերջը՝ Ջահաբասը իւր թիկնապահներով ու իշխաններով, որոնց և կհետևէին՝ հարեմը, հեծելախումբը և այլն և այլն։

Երբ ամեն ինչ պատրաստուեցաւ, դուրս եկաւ Ջահը իւր ապարանքից։ Արաբական նէջէռին պատրաստ կեցած էր գլխաւոր մուտքի առաջ։ Նրա ոսկէ սանձը բռնել էր արքայի հաւատարիմ Ջահուկսը, իսկ ասպանդակը՝ Ամիրգիւնէ խանը։ Ջահը մօտենալով ձիուն՝ թռաւ նրա վրայ

ինչպէս քսանամեայ մի պատանի և առաջ անցաւ:

Հանդիսաւոր գնացքը, որի մի ծայրը գտնուում էր ապարանքի ընդարձակ հրապարակում և միւսը՝ Որտուտտից մի քարընկեց դուրս, նշան առնելուն պէս առաջ շարժուեցաւ: Չնայելով հետիոտների ահագին բազմութեան՝ նա ընթանում էր արագ, և իւր այդ դիւրբում նըմանում լեռնային մի շուտանցուկ հեղեղի, որ զօրեղ հոսանքով առաջ մղուելով՝ ծաւալում է աջ ու ձախ, գրաւում ընդարձակ դաշտեր ու հովիտներ և իւր շատաջար ողողման ներքոյ ծածկում պատահած ամեն խոչ ու խուժ. բայց ծածկում առ ժամանակ և ապա ամեն ինչ կայ տեղը թողնելով՝ հոսում, անհետանում:

Այդ հանդիսաւոր գնացքը, որ արտաքուստ երևում էր կարի շքեղ ու փառաւոր, ներքուստ չունէր ոչ մի ներդաշնակութիւն: Առջևից գնացող հայ հոգևորականութիւնը երգում էր շարականներ, իսկ նրան հետևող գուսանների խումբը՝ աշխարհային անպարկեշտ երգեր: Մի տեղ կրում էին խաչ ու վառեր և սրբադան սպասներ, միւս տեղ՝ դափ ու ծնծղայ և աճալարարական գործիչներ: Միանձնուհիների և աշակերտների համեստ խմբերին՝ յաջորդում էին կայթողներ ու կաքաւողներ, իսկ ազնուականութեան գլխաւորներին՝ խեղկատակներ և ձեռնածուներ: Միով բանին, ամեն տեղ երևում էր անճաշակ զուարճասիրութեան արդիւնք: Չհաբասը ցանկանում էր, որ ուր որ էլ գնար՝ դիմաւորէին իրեն հանդիսով, որ ամեն ազգ և ժողովուրդ հանէր իւր առաջ ամենը՝ ինչ որ ունէր փայլուն ու գեղեցիկ. իսկ թէ դրանց մէջ կար միութիւն կամ ներդաշնակութիւն, այդ բանը նա՝ չէր պտրում ընաւ:

Այսուամենայնիւ, այդ հանդիսական գնացքին ամենից աւելի փայլ էր տալիս հայ հոգևորականութիւնը իւր վեհաշուք թափօրով և արտաքին արդ ու զարդով: Չհաբասը, որ մի առանձին հաճութեամբ յաճախում էր Սպա-

հանում հայոց եկեղեցին և ներկայ լինում նրանց տօնական արարողութեանց, նա մանաւանդ, ջրօրհնեաց, զատկի, համբարձման և վարդավառի տօներին, այստեղ էլ զընտում էր թափօրի հանդէսը ոչ առանց հետաքրքրութեան: Այդ նպատակով իսկ, Որտուտից բաւական հեռանալուց յետոյ՝ նա առաջ վարեց իւր նժոյգը և մօտեցաւ հայ հոգեւորականներին, թափօրն ՚ի մօտոյ զննելու համար: Քահանաների երգեցողութեան ձայնակցում էին այդ միջոցին Տէր Անդրէասի վաթսուն աշակերտները: Եւ այդ ձայնակցութիւնը այնքան զօրաւոր ու ներդաշնակ էր, որ գրաւեց Չահի բարձր ուշադրութիւնը: Բայց հազիւ նա նայեց նրանց վրայ մի վայրկեան և ահա իսկոյն դէմքը խոժոռեց և դառնալով թիկնապահներին հրամայեց.

— Կանչեցէք այստեղ Ամիր-գլինէին:

Նախարարը մօտ եկաւ իսկոյն:

— Խան, այս լինչ ատեղութիւն է, որ հանդէս ես բերել այստեղ, հարցրեց Չահը զայրազին:

— Ի՞նչ, ձերդ մեծութիւն, հայեցեց նախարարը, չկարողանալով իսկոյն հասկանալ թէ լինչի մասին է խօսում Չահը:

— Նայիր, ահա, այս գոնչոտների խմբին. լինչի համար են սրանք այստեղ:

Ամիր-գլինէն նայեց Տէր Անդրէասի աշակերտների վրայ, որոնք, չնայելով որ հագած էին հարուստ շաւիկներ, այսուամենայնիւ, իրանց սափրած և կեղծ-գոնչոտ գլուխներով ներկայացնում էին մի կատարեալ տգեղութիւն:

— Դրանք հայոց դպրոցի աշակերտներն են, Տէր. Հայերը սովորութիւն ունին գերծել ուսանող տղաների գլուխները, պատճառաբանեց նախարարը:

— Բայց նրանք ամենքն էլ վարակուած են գոնջով, ո՞վ համարձակուեց հանել նրանց իմ առաջ, հարցրեց Չահը աւելի գոգոռելով:

Ամիր-գիւնէն մնաց լուռ, որովհետեւ չգտաւ այլեւ մի պատճառ, որով կարողանար արդարացնել իրեն։ Այդ դէպքում նա չէր կարող մեղադրել վէթիլին կամ հայոց առաջնորդին, որովհետեւ Ջահի առաջ ինքն էր միակ պատասխանատուն։

Չահարասը նախարարի լուռութիւնը տեսնելով մի խուլ մոնչիւն արձակեց և նժոյգի գլուխը դարձնելով իւր առաջուայ տեղը դարձաւ։

Արքայի զայրոյթը, որ ուղղուած էր Ամիր-գիւնէի դէմ, տխրեցրեց նրա բարեկամներին, որոնք ծանօթ էին Ջահի չարայոյզ բնաւորութեան հետ, իսկ Չահառուս բէկին, ընդհակառակը, մեծ հաճոյք պատճառեց, որովհետեւ այդ դէպքը յոյս տուաւ նրան թէ՛ շուտով պիտի կարողանայ վրէժխնդիր լինել ոչ միայն նախարարին, որ պաշտօնանկ արաւ իրեն, այլ և Տէր-Անդրէասին, որ խլեց իրենից գեղեցիկ Վարդիթերին։

ԺԲ.

Չնայելով անախորժ միջնադէպին, Չահը մտաւ Ագուլիս, գէթ առ երես ուրախ։ Որովհետեւ, իբրեւ փորձառու մարդ, անպատշաճ էր համարում խոթողուած դէմքով ու սպառնացող հայեացքով մուտ գործել մի քաղաք, ուր ամենքը սրտատրոփ սպասում էին իրեն, ուր ամեն ինչ պատրաստած էր իւր աչքերը պարարելու և հաճոյքը զրգռելու համար։ Չնայելով ձմեռային եղանակին, փոքրիկ աւանը զարդարուած էր կարի չքեղօրէն։ Սարաւոյթներն ու պատշգամները զարդարուած էին վառերով, իսկ տները բարձունքը գոյնզգոյն լապտերներով։ Ջահի անցնելիք փողոցներում կանգնեցրած զանազանակերպ

կամարներ, իսկ հրապարակներում հրավառութեան գահեր ու ճախրակներ, Տունը, որի մէջ օթեան էին պատրաստել Չահի համար, Ագուլիսի միակ հոյակապ շէնքն էր և պատկանում էր հայոց խօջաներից մինին։ Ներքուստ ու արտաքուստ զարդարել էին նրան թաւշով, կերպասով և հնդկական դիւզակներով, իսկ յատակները ծածկել աղնիւ ու մեծազին գորգերով։ Նրա սենեակները կահաւորուած էին արծաթի ու փղոսկրեայ կարասիներով, ապակեզարդ փէնջարէները՝ սքողուած նուրբ ոսկէթել վարդոյրներով, իսկ նրանց քիւերը՝ ծածկուած ծաղիկներով, որոնք դրուած էին ճենապակեայ սկահակներում։ Լայնադիր սանդուխները ծածկում էր քրքմագոյն փիանդազ՝ տարածուելով մինչև բակի մեծ դուռը, որ զարդարուած էր գոյնզգոյն վառերով, լապտերներով և մշտադալար ծառերի ոստերով։

Չահն ամեն ինչ Ագուլիսում գտաւ պատշաճաւոր և հաճոյական, նա մանաւանդ, երբ հրեկոյեան քաղաքը լուսաւորեցին տասնեակ հազարաւոր լապտերներով և ահարկու հրավառութեամբ։ Թէպէտ դրանք չնչին բաներ էին համեմատելով այն վառահեղ ընդունելութեան հետ, որ Չահաբասի համար պատրաստել էին մի օր բարգաւաճ Ջուղայեցիք և որոց միայն լապտերների թիւը հասնում էր այն ժամանակ յիսուն հազարի, այսուամենայնիւ, փոքրիկ Ագուլիսի համար՝ եղած պատրաստութիւններն էլ շատ հերիք էին։ Մանաւանդ որ Չահաբասը, (որի կործանիչ ձեռքը աւերել էր ոչ միայն անուանի Ջուղան, այլ և շատ քաղաքներ ու գեղեր՝ ցրելով ու տարագրելով նրանց բնակիչներին), վաղուց էր, ինչ չէր տեսել այնպիսի ընդունելութիւն, որպիսին այժմ պատրաստել էին տակաւին շէն Ագուլեցիք։ Այս պատճառով նա գուարճանալով զինքը շրջապատող հրապոյրներով՝ մոռացաւ մինչև անգամ այն տհաճութիւնը, որ նա ճանապարհին ըզ-

գացել էր իրեն ընդառաջող տղաների «գերծած գլուխները» տեսնելով:

Բայց սատանան, որ միշտ գործում է մարդու ձեռքով և խօսում նրա լեզուով, չէր դադարում հայոց բազմի անիւր դէպի ձախ դարձնելուց: Երբ թագաւորն իւր մեծամեծների առաջ գոհունակութիւն յայտնեց Ագուլեցւոց ընդունելութեան մասին, Չահուլս-բէկն իսկոյն յիշեցրեց նրան «գերծած գլուխները» չարայուշ դէպքը, աւելացնելով թէ՛ «այդ ամենամեծ անարգանքն է, որ հային, առհասարակ, ցոյց են տալիս իրենց անհաճոյ եղող թագաւորին»: Այդպիսով բէկը կամենում էր շարժել Չահի գայրոյթը, որի հետևանքը, հարկաւ, պիտի լինէր նախատինք Ամիր-գիւնէին և կորուստ՝ բազմաթիւ ու անուանի հայերի:

Բայց որովհետեւ Ամիրգիւնէն ներկայ էր այդ զրոյցին, ուստի թոյլտուութիւն խնդրելով թագաւորից՝ ծանր դիտողութիւն արաւ չարասէր Չահուլսին:

— Դու արքայի հաւատարիմն ես և քեզ չի վայելիլ չարախօսիլ նորին մեծափայլութեան առաջ իւր հպատակ ժողովրդից և դրանով արքայի սիրտը վշտացնել, այն արքայի, որ միայն և եթ իւր ժողովրդի բարօրութեան ու հանգստութեան վրայ է մտածում: Եթէ հայերը երազէին նուազեցնել իրենց յարգանքը դէպի արեգակնափայլ Չահը, ապա նրանք չէին ընդառաջիլ նրան այնպիսի աշխարհախումբ բազմութեամբ, որպիսին տեսար դու այսօր: Նրանցից ոչ մէկին մենք չենք ստիպել, այլ իրենք են յօժարակամ եկել տեսնելու այն մեծ արքային, թագաւորաց թագաւորին, որի մի բարի խօսքը ազգեր է բաղդաւորացնում. մի քաղցր հայեացքը թշուառութիւնների վերացնում. որն ամենակարող Աստուծոց ու նրա մարգարէից յետոյ՝ միակ պաշտպանն է անօգնական այրիների, խղճուկ որբերի, ոտնակոխ եղած իրաւունքների...

որ ուրախութեամբ վարձատրում է բարութիւնը և քաջա-
լերում իւր ծառաների հաւատարմութիւնը, որ 'ի հարկէ,
չի կայանում գաղտնի քսութեամբ անմեղներին մատնե-
լու մէջ....

Նախարարի վերջին հաճոյախօսութիւնը աւելի ազ-
դեցութիւն արաւ Չահի վրայ՝ քան Չահուլսի չարախօ-
սութիւնը, այդ պատճառով կամենալով իւր հաճութիւնը
ցոյց տալ Ամիրգիւնէին, Չահը ընդհատեց.

— Ես չնորհակալ եմ հայերից, խան և, մինչև ան-
գամ, պիտի ներեմ նրանց, եթէ իմանամ որ տղաների
գլուխները նրանք գերծել են միամտաբար, Բայց և այն-
պէս, ես Չահուլսին իրաւունք եմ տալիս քննել այդ
բանի պատճառները և յայտնել ինձ անյապաղ թէ՛ ով,
որքան յանցաւոր է այդ գործում:

Եւ սակայն «գերծած գլուխների» գործը կարելի էր
մոռացնել, կամ, գոնէ, այդ առթիւ ներողութիւն հայցել,
մանաւանդ որ Ամիրգիւնէն հոգում էր հայերի համար.
Բայց շուտով առաջ եկաւ նաև մի հանվամանք, որ կրկին
Չահաբասի դայրոյթը գրգռեց, որով և հայոց յանցանքի
կշիռը ծանրացաւ:

Չահի Ագուլիս մտնելու երկրորդ օրը, ինչպէս օրէնք
էր, ժողովրդի գլխաւորները ներկայացան Արքային՝ բարի
գալուստ մաղթելու և այդ առթիւ նրան ընծաներ տա-
լու համար:

Պարզ է, որ ներկայացողների ամենամեծ մասը
հայոց մելիքները, խօջաները և ազնուականներն էին. 2ը-
նայելով որ նրանց բերած թէ՛ ընծաները և թէ՛ ոսկինե-
րը աւելի չքեղ ու առատ էին, բայց որովհետև համա-
ձայն տէր Անդրէասի խորհրդին և կանխաւ արած որոշ-
ման, նրանցից իւրաքանչիւրը ընծաներն առաջարկեց Չա-
հին իբրև նուէր, իսկ ոսկին՝ իբրև ս. աթոռի պարտա-
վճար, ուստի Չահն այդ բանից սաստիկ վիրաւորուեց:

Երբ ամենքն արդէն իրենց ընծաները տուին իսկ ոսկիները կուտեցին ոսկէ սկուտեղներում, Ջահն սկսաւ ոլորել իւր հարուստ ընչացքները և ապա նորէն ցրուել նրանց իւր գերուկ ծնօտների ուղղութեամբ։ Այդ նշան էր որ նա կամենում էր խօսել։ Ուստի ամենքը ձեռքները կրծքին և գլուխները խոնարհած՝ լարեցին իրենց լրսողութիւնը։

— Նրանք, որոնք այժմ իմ գալուստը շնորհաւորեցին՝ իսկութեամբ ըմբռնելով Իրանի մեծ գահակալին և Արքայից Արքային պարտ ու պատշաճ յարգանք մատուցանելու պարտքերնին, հարկաւ, կարժանանան իմ բարեհաճ ուշադրութեան։ Իսկ նրանք, որոնք թերահաւատել են իրենց պարտաւորութեան մէջ կամ գռեհկութեամբ աշխատել են աչքերը խաբել, նրանք, եթէ չիջնեն իսկ իրենց արդի դիրքից, գէթ կմնան այնտեղ, ուր երբէք չի հասնիլ մեր վեհ աթոռի կենդանարար ճառագայթը...

Այս բարձրայօն պատգամից յետ՝ Ջահը դարձու նախարար Ամիրգիւնէին։

— Խան, ասաց նա, ես սիրում եմ և ճշմարտախօսին և փիլիսոփային։ Բարեբաղդաբար դու և՛ առաջինն ես և երկրորդը. արդ, ասա ինձ, կարելի է փրկել այն անհատին կամ ժողովրդին, որ կամենում է կորչել։

— Ոչ Տէր իմ, պատասխանեց Ամիրգիւնէն։

— Ես էլ այդ կարծիքին եմ, յարեց իսկոյն Ջահը. այս հայերը, խան, շատ թաքս մարդիկ են. ինձ թւում է թէ՛ նրանց մանուկներին մանկաբարձը միշտ ձախ ձեռքով է ընդունում... այսպիսի սովորութիւն կայ ձեր մէջ, հարցրեց Ջահը հայոց մեղիքներին։

— Ոչ, մեծափառ Տէր, պատասխանեցին նրանք։

— Ուրեմն ուրիշ տեղ պէտք է որոնել ձեր թաքսութեան պատճառները։

Այս ասելով Ջահը նորէն սկսաւ իւր ընչացքը ոլո-

րել և ապա դառնալով Խօջայ Նազարին, որ հարուստ ու անուանի լինելուց զատ, նաև պաշտօն ունէր արքունիքում, խիստ ձայնով հարցրեց.

— Խօճայ-Նազար, ինչո՞ւ բո այս հայերը անպատճառ կամենում են կորչել:

— Եթէ Քո մեծափառութեան աջը հովանաւորում է նրանց, նրանք չեն կորչիլ, պատասխանեց Նազարը:

— Այս օրուանից իմ աջը ես հեռացնում եմ նրանցից:

— Այդ անելուց առաջ, մեծափառ Արքայ, հրամայիր որ իմ հայրենակիցները մատնեն իրենց Յրասխի կատաղի ալիքներին:

— Քո խելքը, Նազար, չի փրկիլ դրանց:

— Բայց Քո զթութիւնը կփրկէ:

— Անկարելի է, ասում եմ քեզ:

— Արևը միայն լոյս ու կենդանութիւն է սփռում, նկատեց Նազարը այլաբանօրէն:

— Բայց նա շատ անգամ, նաև, չորացնում ու այրում է, պատասխանեց Չահր նոյն ձևով:

— Ինչո՞ւ արդեօք, մեծափառ Տէր, իմ հայրենակիցներն արժանացան բո արդար բարկութեան:

— Ինչո՞ւ. դու սպասաւորում ես Արքայի դրանը և դեռ չգիտես թէ՛ ինչ յանցանք գործեցին նրանք այժմ իմ առաջ:

— Իմ միտքը լուսաւորում է միայն Արքայի իմաստուն թեւադրութեամբ, առարկեց Նազարը:

— Եթէ այդպէս է, ուրեմն լսիր: Այս ասելով Չահր դարձաւ դէպի հայոց գլխաւորներն ու շարունակեց. — Ասացէք ինձ անկեղծօրէն, երբ ձեզ մօտ գալիս է մի թանկագին հիւր, որի հետ դուք առաջուց ունենում էք հաշիւներ, արդեօք դուք նախ նրա գալուստն էք շնորհաւորում, ողջունի ճաշ մատուցանում և ապա թէ նրա հաշուի մասին խօսում, թէ՞ ամենից առաջ հաշուի մատեանն էք բանում:

Հայերը լաւ էին:

— Չեր աթոռը, կամ ճիշտն ասած, ձեր կաթուղիկոսը պարտ է իմ գանձարանին երեք հարիւր թուման, այդ փողը պիտի վճարուէր ընդունուած եղանակով: հակառակ գէպքում, ձեր կաթուղիկոսը պիտի կրէր իւր շղթան մինչև կեանքի վերջը, այդ յայտնի էր ձեզ թէ ոչ:

— Յայտնի էր, Տէր, պատասխանեցին Մելիքները:

— Արդ, ի՞նչ իրաւունքով դուք նրա հաշիւները խառնել էք այսօր այն նուէրների հետ, որ պիտի մատուցանէիք ձեր Վահագետին:

Ամենքը լուռ էին:

— Սկզբից արդէն դուք սովոր էիք ընծաների հետ միասին բերել ձեր արքային նաև առատ ոսկի: Այդ կարգին առաջին անգամ ես տեսայ Ջուղայում, ուր մուտ գործեցի ես տասներկու տարի առաջ: Այդպէս է թէ ոչ, խօջայ Անձրի, դարձաւ թագաւորը Ծղնեցի խօջային:

— Այո, տէր իմ. և ոսկւոյ առաջին սկուտեղը բաղդ ունեցաւ ներկայացնել Քո մեծափառութեան խօջայ Խաչիկը:

— Այո, իմ բարի հիւրընկալը, որ Երասխի ափից մինչև իւր տունը մետաքսէ ազնիւ փիանդազ էր փռել իմ ոտքերի տակ... տեսնում էք. ես չեմ մոռանում իմ լաւ հպատակի լարժանաւոր գործը... բայց ինչպէս եղաւ նրա վախճանը, չեմ յիշում, հարցրեց Չահր՝ դառնալով նազարին:

— «Խօջայ Խաչիկը խեղդուեցաւ Երասխում այն տարին, երբ Քո մեծափառութեան հրամանով հայերը բռնուեցան Պարսկաստան: Քշող վերակացուներից մինը երկաթէ գաւազանով հրել էր նրան դէպի գետը այն ժամանակ, երբ խօջան կամենում է եղել ազատել իւր տասներկու տարեկան աղջկան, որին, գետից անցնելու պատրուակով, առևանգում է եղել մի զօրական:

— Թող Աստուած լուսաւորէ նրա հոգին, յարեց Ջահն անտարբերութեամբ և ապա դառնալով մեկիքներին՝ շարունակեց.

— Զուլայեցւոց այդ ընդունելութիւնը հաճելի եղաւ ինձ. և ես հրամայեցի որ այնուհետև ամեն տեղ իմ երկրում նոյն կերպով ընդունեն ինձ: Արդ, եթէ այս ոսկիները դուք խնդրում էք ընդունել կաթուղիկոսի պարտքի տեղ, հապա ուր են այն ոսկիները, որը պարտաւոր էիք մատուցանել իբրև զին այն շնորհին, որ արաւ ձեզ Իրանի մեծ գահակալը՝ այցելելով ձեր այս խղճով քաղաքին: Զայեբը դարձեալ լուռ էին:

— Ի պատիւ իմ աղնիւ խան Ամիր-գիւնէի, որ հոգում է միշտ ձեր բարօրութեան համար և ի շնորհաձեք հայրենակիցների, խօջայ Նազարի, խօջայ Սուլթանումի, Մելիք-Հայկազի, Մելիք Սուլումի, քաջ Միրզիլիի և ուրիշների, որոնք արժանացել են իմ դրան մեծագոյն պատուին, ես ներում եմ ձեզ ձեր այդ յանցանքը և այս աւուր բերած թէ՛ ընծաներն և թէ՛ ոսկիները ընդունում եմ միայն իբրև ողջունի նուէր, որն ամեն մի հաւատարիմ հպատակ պատրաստ է դնել իւր Ջահնշահի ոտքերի տակ... Իսկ ինչ վերաբերում է կաթուղիկոսի պարտքին, այն պիտի վճարուի իմ գանձարանին մինչև վերջին փողը, հակառակ դէպքում կաթուղիկոսի միտք ես պոկել կտամ ակցաններով, ինչպէս որ արի չորս տարի առաջ, Ամիր-գիւնէի որդու ձեռքով՝ Նրևանի հրապարակում: Ես մինչև անգամ կախել պիտի տայի նրան Գորիում, ուր եկել էր այդ ժամանակ իմ գթութիւնը հայցելու, եթէ իմ այս բարի խանը կրկին և կրկին բարեխօսած չլինէր նրա մասին և թողութիւն խնդրած:

Հայոց գլխաւորները առանց մի բառ անգամ արտասանելու խոնարհեցին Ջահի առաջ մինչև գետին և միայն խօջայ Անձրևը համարձակութիւն առաւ բոլորի կողմից ասելու՝

— «Թող կատարուի հզօր Չահի կամքը, որի առաջ խոնարհելը ոչ միայն պարտաւորութիւն, այլ բաղդաւորութիւն է մեզ համար»:

Չահի հեռանալով մէջլիսը ցրուեցաւ:

ԾՈՒՐԱՅԱՆ

(Ղերբը միւս համարում):

